




Իլարիոն Արքեպիսկոպոս

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ
ԱՌԱՆՅ ԵԿԵՂԵՅՈՒ



ՀՐԱՄԱՆԱԻ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
S. S. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

SPIRITUAL READINGS - 14

**HILARION ARCHBISHOP
(Troitskij)**

**CHRISTIANITY
IS NOT WITHOUT THE CHURCH**

*Translate from russian
by Archpriest Vahram Melikyan*

Second edition

St. Etchmiadzin – 2021

ДУХОВНЫЕ ЧТЕНИЯ - 14

**АРХИЕПИСКОП ИЛАРИОН
(Троицкий)**

**ХРИСТИАНСТВА
НЕТ БЕЗ ЦЕРКВИ**

Второе издание

Св. Эчмиадзин – 2021

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
ԺԴ

ԻԼԱՐԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
(Տրոիցկի)

ՉԿԱ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ

*Ռուսերենից թարգմանեց
Տ. Վահրամյան ավագ քահանա Մելիքյանը*

Բ հրատարակություն

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԵՐՆԻ

ՀՐԱՏԱՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2021

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Տ 930

*Ռուսերենից թարգմանեց
Տ. Վահրամ ավագ քահանա Մելիքյանը
Խմբագիրներ
Արա Գալոյան, Հեղինե Մկրտչյան*

ՏՐՈՒՑԿԻ ԻԼԱՐԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տ 930 Չկա Քրիստոնեություն առանց Եկեղեցու/ Իլարիոն արք. Տրոիցկի; Ռուսերենից թարգմանեց Տ. Վահրամ ավագ քահանա Մելիքյանը; Խմբ.՝ Ա. Գալոյան, Հ. Մկրտչյան. – Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, 2021.– 128 էջ:

Իլարիոն արք. Տրոիցկու՝ «Չկա Քրիստոնեություն առանց Եկեղեցու» աշխատությունը գրվել է 20-րդ դարի սկզբին և ցայսօր իր պատգամով այժմեական է նաև հայ հասարակության համար: Քրիստոնեությունն ու Եկեղեցին չեն կարող անջատարար դիտվել, այլ միայն փոխկապակցության մեջ՝ աղոթական և ներեկեղեցական կյանքով:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

Առաջին հրատարակությունը՝ Ս. Էջմիածին, 2011 թ.

ISBN 978-9939-59-266-4 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան7

Իլարիոն Արքեպիսկոպոս
(կենսագրական ակնարկ) 9

Չկա Քրիստոնեություն առանց
Եկեղեցու..... 17

ԱՌԱՋԱԲԱՆ

Քրիստոնեություն և Եկեղեցի. դարեր շարունակ իբրև մեկ միասնություն հանդես եկող այս երկու հասկացությունները մեր օրերում զանազան գաղափարախոսությունների, փիլիսոփայական ուսմունքների, աշխարհայացքների և կրոնական հոսանքների հորձանուտում հայտնված մարդկանց ընկալումներում երբեմն տարանջատվում են: Ժամանակակից հասարակության «առաջադեմ և գիտակից» մասի կողմից Քրիստոնեությունն ընկալվում է սուկ «համամարդկային» արմատներ ունեցող բարոյական արժեքների մի համակարգ, իսկ Եկեղեցին դիտարկվում է իբրև պատմական մի կառույց, որը սպառել է իրեն և որևէ գործնական նշանակություն չի կարող ունենալ ժողովրդի առօրյայում:

Այս թյուրըմբռնման որոմները սկսեցին ծլարձակել դեռևս 19-րդ դարի վերջին, երբ հատկապես մտավորականության շրջանում «լուսավորչական» ձգտումները բավարարվում էին արտաքրիստոնեական տարբեր ուսմունքների և աշխարհաքաղաքացու մտածողությանը հատուկ փնտրտուքների եզրահանգումներով: Անդեմ և անորոշ աստվածորոնման

այս ճանապարհին անտեսվեց եկեղեցական կյանքի հոգևոր փորձառությունը, քրիստոնեության ճշմարտությունը խեղվեց, իսկ Եկեղեցու մասին ընկալումն ընդհանրապես աղավաղվեց:

Նույն այս մթնոլորտն էր տիրում ռուս հասարակության մեջ 20-րդ դարի սկզբին, երբ գրվեց Իլարիոն արքեպիսկոպոս Տրոիցկու՝ «Քրիստոնեություն չկա առանց Եկեղեցու» աշխատությունը: Նա համոզված էր, որ Քրիստոնեությունն ու Եկեղեցին չեն կարող անջատաբար դիտվել, այլ միայն փոխկապակցության մեջ՝ աղոթական և ներեկեղեցական կյանքով:

Ռուս հեղինակի աշխատությունն իր պատգամով այժմեական է նաև հայ հասարակության համար, երբ տարբեր կրոնական հոսանքներ ամեն կերպ ջանում են աղճատել դարերով կերտված ազգային՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անաղարտ կերպարը և փրկչական առաքելությունը: Գրքի հայերեն թարգմանությունը մեծապես կարող է օգտակար լինել ինչպես պարզ հավատացյալի, այնպես էլ՝ եկեղեցականների համար, ովքեր այսօր ևս շարունակում են տարբեր տեսակի հարձակումներից պաշտպանել Եկեղեցին և նրա առաքելությունն անհատի և հասարակության կյանքում:

Վահրամ ավագ քահանա Մելիքյան

ԻԼԱՐԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Տրոիցկի) *(կենսագրական ակնարկ)*

Իլարիոն արք. Տրոիցկին (ավագանի անունով՝ Վլադիմիր) ծնվել է 1886 թ. սեպտեմբերի 13-ին, քահանայի ընտանիքում: Հայրը՝ Ալեքսեյ քին. Տրոիցկին քահանայագործում էր Մոսկվայի նահանգի Կաշիռի շրջանի Լիպիցի գյուղում: Իլարիոնն ուներ երկու եղբայր և երկու քույր: Եղբայրներից Դմիտրին, վանականության ուխտ ընդունելով, հետագայում դարձավ Բրյանսկի եպիսկոպոսը, իսկ Ալեքսեյը, իբրև քահանա, շարունակեց հոր հոգևոր առաքելությունը հայրենի գյուղում: Իլարիոնի մայրը վաղ էր մահացել, և երեխաների դաստիարակությամբ զբաղվում էր հորաքույրը՝ գյուղի ծխական դպրոցի ուսուցչուհին:

Ապագա արքեպիսկոպոսի, Եկեղեցու նվիրյալ պաշտպանի և նահատակի մանկությունն անցել է հայրենի գյուղի եկեղեցում: Դեռ վաղ հասակից նա արդեն տիրապետում էր սլավոներենին, իսկ հինգ տարեկանից մասնակցում էր ժամերգություններին:

1900 թ. Տրոիցկին ավարտում է Տուլայի հոգևոր ուսումնարանը, 1906 թ.՝ Տուլայի հոգևոր ճեմարանը

և ընդունվում Մոսկվայի հոգևոր ակադեմիա:

1910 թ. աստվածաբանական գիտությունների թեկնածուի կոչումով ավարտելով ուսումնառությունը՝ անցնում է դասախոսական աշխատանքի նույն ակադեմիայում:

1913 թ. պաշտպանում է մագիստրոսական ավարտաճառը՝ «Եկեղեցու վարդապետության պատմության դիտարկումներ» թեմայով:

1913 թ. Տրոիցկին նշանակվում է Մոսկվայի հոգևոր ակադեմիայի Նոր Կտակարանի ամբիոնի դոցենտի պաշտոնին և արժանանում պրոֆեսորի կոչման: 1913 թ. մարտի 28-ին, ընտրելով վանականության ճանապարհը, ստանում է Իլարիոն անունը: Նույն թվականի ապրիլի 11-ին ձեռնադրվում է կուսակրոն սարկավագ, իսկ հունիսի 2-ին՝ աբեղա: Հուլիսի 5-ին նրան շնորհվում է վարդապետի կոչում:

Ընտրելով վանական կյանքը՝ Տրոիցկին շարունակում է գիտական գործունեությունը Մոսկվայի ակադեմիայում, որը դառնում է նրա համար հոգևոր և գիտական կյանքի յուրօրինակ համադրության մի վայր:

Իլարիոն արքեպիսկոպոսն իր քսանամյա գիտական գործունեության ընթացքում հիմնականում քննության է առել մեկ հարց՝ ի՞նչ է Եկեղեցին: Նա իրեն երբեք չի պատկերացրել Եկեղեցուց դուրս: Նրա բոլոր գրվածքներում Եկեղեցին ընկալվում է իբրև խորհրդավոր մի մարմին, որի անդամներ-

րին միավորում է ընդհանուր բարեբեր կյանքը, որի անունն է՝ Սեր: Նրա եկեղեցաբանությունը փորձագիտական բնույթի է, եկեղեցու վարդապետությունը նա նկատում է եկեղեցական ինքնագիտակցության արտահայտություն: Եկեղեցու մասին նրա ընկալումը խարսխված է Ս. Գրքի և Եկեղեցու սուրբ հայրերի վարդապետության վրա, հայրաբանական հայացքները նրա կողմից խորապես քննվում են անձնական փորձառության լույսի ներքո:

Տրոիցկու գործերը շարադրված են չափազանց պարզ և հստակ ոճով, ոգին հատկանշվում է ամրությամբ և մեծ ուժով: Նրան հատուկ են նրբանկատությունը և բարությունը, ակնհայտ է ձգտումը դեպի սրբությունը և գերագույն Գեղեցիկը:

Տրոիցկու կենսագրության կարևոր հանգրվաններից է 1917 թ. Ռուս Եկեղեցու տեղական ժողովը, որտեղ նա հանդես եկավ «Ինչո՞ւ է անհրաժեշտ վերականգնել պատրիարքությունը» իր հայտնի ճառով՝ մեծապես նպաստելով Ռուս Եկեղեցում երկու հարյուր տարվա դադարից հետո պատրիարքի հանգամանքի վերականգնմանը: Տիխոն պատրիարքի ընտրությունից հետո նա դարձավ վերջինիս քարտուղարը, աստվածաբանական հարցերում գլխավոր խորհրդատուն և աջակիցը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Եկեղեցին ծանր շրջան էր ապրում: Հարկ էր հաղթա-

հարել խորհրդային ալեկոծ ծովը և Եկեղեցու նավը հասցնել խաղաղ նավահանգիստ: Խորհրդային իշխանությունների հետ բոլոր հանդիպումների և բանակցությունների ընթացքում Իլարիոն Սրբազանը հավատարմորեն պաշտպանում է պատրիարքին, ինչը հանգեցնում է 1919 թ. երկամյա բանտարկության: Նույն թվականին փակվում է ակադեմիան, որով խզվում է Սրբազանի կապը Սերգիև Պոսադի հետ: Տրոիցկին սկսում է ծառայել իբրև Սրբտենյան վանքի վանահայր:

1920 թ. մայիսին պատրիարքը նրան օծում է Վերեյի եպիսկոպոս՝ նշանակելով Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ: Նոր աստիճանի շնորհումը Իլարիոն եպիսկոպոսն ընկալում է իբրև աստվածային նախախնամություն՝ գիտակցումով, թե ինչպիսի նահատակության է գնում:

Ժողովրդի սերը նորած եպիսկոպոսի հանդեպ տարեցտարի աճում է: Նրան կոչում են «Իլարիոն Մեծ», մինչդեռ նվիրյալ եկեղեցականը շարունակում է իր խոնարհ ծառայությունը՝ բնակվելով քահանաներից մեկի մասնավոր բնակարանում, քանզի իշխանությունները բռնագրավել էին Սրբտենյան վանքի կացարանները:

1921 թ. Ռուսաստանում սկսվում է եկեղեցական գույքի և արժեքների բռնագանձումը, որին հաջորդում է նաև հոգևորականների բռնադատումը:

1922 թ. ապրիլին ձերբակալվում է Տիխոն պատրիարքը, իսկ մարտին կալանքի դատապարտված Իլարիոն Սրբազանը մեկ տարով աքսորվում է Արխանգելսկ:

1923 թ. բանտից ազատ արձակված պատրիարքը Իլարիոն եպիսկոպոսի օգնությամբ սկսում է պայքարը Եկեղեցի սողոսկած և պետության աջակցությունը վայելող եկեղեցական նորարարական շարժումների դեմ: Կարճ ժամանակում բանակցությունների և անձնական հեղինակության շնորհիվ նրանց հաջողվում է մաքրել Մոսկվան «նորարարներից»: Ժամանակի ընթացքում հետ է վերցվում նաև նրանց կողմից գրավված Սրետենյան վանքը: Իլարիոն արքեպիսկոպոսը վերածում է վանքը՝ ցույց տալով, թե ինչպիսի ծանր մեղք է Եկեղեցու ուրացումը: Լուրը տարածվում է Մոսկվայում և ամբողջ Ռուսաստանում՝ պատճառ դառնալով եկեղեցակործան այդ շարժման հետևորդների համատարած դարձի: Սակայն այս ամենը չէր կարող ներվել շարժման առաջնորդների և նրանց հովանավոր չեկիստների կողմից: Շուտով Իլարիոնը կրկին ձերբակալվում է: Նրան դատապարտում են երեք տարվա ազատազրկման համակենտրոնացման ճամբարներում:

1924 թ. նա ուղարկվում է Սոլովկի: Սպիտակ ծովի ափին Իլարիոն Տրոիցկին աշխատում է իբրև ձկնորս, ձկնորսական ցանցեր հյուսող, անտառա-

պահ, պահակ, սակայն երբեք չի կորցնում իր հոգևոր ամրությունը: «Պետք է գոնե փոքր-ինչ ապրել այս միջավայրում, այլ կերպ չես կարող պատկերացնել: Հիրավի, սա ինքը՝ սատանան է»:

Ճամբարում նա մեծ հեղինակություն էր վայելում: Բոլորը՝ բանտապան թե բռնադատված, պատկառանքով էին վերաբերվում նրան: Նրա շնորհիվ ճամբարը վերածվում է յուրօրինակ հոգևոր օջախի, ուր շատերը գտնում են իրենց փրկությունը:

Այս շրջանում է, որ Իլարիոն Սրբազանի ակտիվ մասնակցությամբ կազմվում է «Սուլվեցյան եպիսկոպոսների պատմական ուղերձ»-ը: Այն ճամբարում ձևավորված յուրօրինակ գաղտնի եկեղեցական ժողովի ուղերձն էր, որն արտահայտում էր մի խումբ եպիսկոպոսների կամքը: Փաստաթղթի հեղինակները հայտարարում էին Խորհրդային Միության մեջ եկեղեցու հետապնդումների մասին, հորդորում իշխանություններին իրապես կյանքի կոչել եկեղեցին պետությունից անջատելու մասին օրենքը՝ եկեղեցին զերծ պահելով պետական պաշտոնյաների միջամտությունից և ճնշումներից, բացահայտում էին նորընծա «Կենդանի եկեղեցու» հակաեկեղեցական ողջ էությունը:

1925 թ. ամռանը Տրոիցկուն անսպասելի փոխադրում են Յարոսլավլի բանտ, ուր փորձում են նրան համոզել միանալ «գրիգորյան» կոչված նորարարա-

կան հերձվածին: Սակայն չուրանալով իր Եկեղեցին՝ Սրբազանը նախընտրում է մնալ բանտում: Մեկ տարի անց նրա բանտարկությունը, երկարաձգվում է ևս երեք տարով:

1926 թ. գարնանը նա վերստին վերադառնում է ճամբար:

1927 թ. Ռուս Եկեղեցու ծոցում հասունացող նոր՝ հովսեփյան հերձվածի դեմ պայքարում Իլարիոն Սրբազանը աջակցում է Սերգիյ միտրոպոլիտին՝ պաշտպանելով նրա դիրքորոշումը: Նրա շուրջը հավաքված տասնհինգ եպիսկոպոսները միաձայն դատապարտում են նոր հերձվածը և խոստանում հավատարիմ մնալ Ուղղափառ Եկեղեցուն:

1929 թ. նվիրյալ եկեղեցականի ազատագրության ժամկետը մոտենում էր ավարտին: Սակայն իշխանությունները ևս երեք տարով երկարաձգում են այդ ժամկետը՝ այս անգամ նրան ուղարկելով Միջին Ասիա: Ճանապարհին Իլարիոն Սրբազանը հիվանդանում է տիֆով: Հիվանդ եկեղեցականին փոխադրում են Լենինգրադի բանտ: Օրեր անց 41 աստիճան ջերմությամբ տեղափոխվում է հիվանդանոց, սակայն բժիշկներն այլևս անկարող էին օգնել տառապյալ հոգևորականին:

«Ահա այժմ ես բացարձակ ազատ եմ», «Որքան լավ է, այժմ մենք հեռու ենք...»: Ինչպես վկայել է ապագա սրբի մահվան սնարի մոտ գտնվող բժիշ-

կը, սրանք Տրոիցկու վերջին խոսքերն էին: 1929 թ. դեկտեմբերի 15/28-ին Իլարիոն արքեպիսկոպոսը վախճանվում է:

Լենինգրադի միտրոպոլիտ Սերաֆիմի ջանքերով իշխանություններն արտոնում են հանգուցյալ հոգևորականին հուղարկավորել Եկեղեցական աստիճանին համապատասխան: Նրա մարմինն ամփոփվում է Նովոդևիչյան գերեզմանոցում:

1998 թ. Իլարիոն Սրբազանի մասունքները գտնվում են և փոխադրվում նախ Սանկտ Պետերբուրգի Նովոդևիչիյ վանք, ապա՝ Մոսկվա, ուր ամփոփվում են Սրբտենյան վանքում:

2000 թ. Ռուս Ուղղափառ Եկեղեցու Եպիսկոպոսաց Ժողովի որոշմամբ Իլարիոն արքեպիսկոպոս Տրոիցկին դասվում է սրբերի շարքը:

ՉԿԱ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ

«Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական,
Առաքելական եւ Սուրբ Եկեղեցի»:

Այսպես է յուրաքանչյուր ուղղադավան
Քրիստոնյա խոստովանում իր հավատը
Եկեղեցու մեծ ճշմարտության հանդեպ «Հաւա-
տոյ հանգանակի» իններորդ հատվածում:

Սակայն հազիվ թե հնարավոր լինի մատնան-
շել «Հաւատոյ հանգանակի» մեկ այլ հատված,
որն այդչափ քիչ ընկալվեր «Հաւատոյ հանգա-
նակն» ընթերցող մարդու սրտի և այն արտասա-
նող շուրթերի կողմից, որքան հենց իններորդը,
ուր և արտահայտված է Եկեղեցու ճշմարտությու-
նը: Մասամբ դա նաև հասկանալի է: Չէ որ հենց
«Հաւատոյ հանգանակի» իններորդ հատվածում
է մարդ խոստովանում իր կապը Քրիստոսի հե-
տևորդների տեսանելի հասարակության հետ, և
այդպես՝ համառոտ այդ բառերով խոստանում
է համաձայնել Քրիստոսի վարդապետության
պահապանը համարվող Եկեղեցու կողմից ուսու-
ցանվող ճշմարտությունների հետ և իր կյանքում

ենթարկվել բոլոր այն կանոններին, որոնցով
Նկեղեցին հասնում է իր գոյության նպատակին
և որոնցով առաջնորդվում իբրև երկրի վրա ապ-
րող հասարակություն: Այսպիսով՝ կարծում ենք,
մեղանշած չենք լինի, եթե հետևյալ միտքն արտա-
հայտենք, թե Նկեղեցու ճշմարտությունը, այլոց
համեմատ առավելություն ունենալով, առնչվում
է ուղղակի յուրաքանչյուր քրիստոնյայի կյան-
քին, որոշում է ոչ միայն նրա հավատալիքը, այլև
հենց՝ կյանքը: Ընդունել Նկեղեցին՝ նշանակում է
ոչ թե երազել միայն Քրիստոսի մասին, այլ ապ-
րել քրիստոնեաբար, ընթանալ սիրո և ինքնահ-
րաժարումի ճանապարհով: Նկեղեցու հանդեպ
հավատը պահանջում է մարդու և՛ մտքի, և՛ կամ-
քի սխրանք: Դրա համար էլ Նկեղեցու ճշմար-
տությունը հակառակ է կյանքի այն սկզբունքնե-
րին, որոնք ժամանակի ընթացքում աներևույթ
կերպով ներխուժել են անգամ ռուս ուղղափառ
հասարակության՝ առավելաբար այսպես կոչված
մտավորական և կիրթ հասարակության գիտակ-
ցության և ներհայեցողության մեջ: Եկեղեցու
համար Պետրոս Առաջինի տխուր ժամանակնե-
րից սկսյալ ռուս հասարակության վերնախա-
վը կտրվեց եկեղեցական ազգային կյանքից և
սկսեց ապրել ընդհանուր կյանքով թերևս բոլոր
եվրոպական ժողովուրդների հետ, բայց՝ ոչ ռուս

Ժողովրդի հետ: Կյանքի բոլոր ոլորտներում ենթարկվելով արևմտյան ազդեցության՝ ուսա հասարակությունը չէր կարող խուսափել արևմտյան հարանվանությունների կողմից իր կրոնական աշխարհայացքի վրա ազդեցությունից: Իսկ այդ հարանվանությունները պատահական չէ, որ Ուղղափառ Եկեղեցու և սուրբ Հայրենիքի նվիրյալ զավակ Ա. Ս. Խոմյակովը կոչում էր «հերետիկոսություններ, որոնք Եկեղեցու էության դոգմայի դեմ են, հենց նրա հավատի դեմ» և Եկեղեցու մերժումն իզուր չէ, որ համարում էր և՛ կաթոլիկության, և՛ բողոքականության ամենից հատկանշական գիծը:

Եկեղեցուց Հոռմի բաժանումից հետո Եկեղեցու ճշմարտությունն Արևմուտքում շատ է աղավաղվել, և Աստծու արքայությունն այնտեղ սկսել է նմանվել երկրային արքայության: Լատինականությունը բարի գործերի իր երկրային համարումով, Աստծու հանդեպ իր վարձկանական վերաբերմունքով, փրկության իր կեղծումով իր անդամների գիտակցության մեջ պղտորել է Եկեղեցու քրիստոնեական գաղափարը:

Լատինականությունն ի դեմս բողոքականության ծնեց միանգամայն օրինական, թեպետ բավականին անհնազանդ զավակ: Բողոքականությունը միայն հին եկեղեցական քրիստոնեական

գիտակցութեան ընդվզում չէր ճշմարտութեան այն աղավաղումների դեմ, որոնք թույլ էր տվել միջնադարյան պապականութիւնը, ինչպէս հաճախ հակված են ներկայացնել բողոքական աստվածաբանները: Ո՛չ, բողոքականութիւնը մարդկային մի մտքի ընդվզումն էր մյուսի դեմ: Այն չվերականգնեց նախնական քրիստոնեութիւնը, այլ քրիստոնեութեան մի աղճատումը փոխարինեց մյուսով. և նոր կեղծիքն ավելի դառն էր առաջինից: Բողոքականութիւնն արտահայտեց պապականութեան վերջին խոսքը, որից և վերջնական տրամաբանական եզրահանգում կատարեց: Ճշմարտութիւնը և փրկութիւնը տրված են սիրուն, այսինքն՝ Եկեղեցուն. այդպիսին է եկեղեցական գիտակցութիւնը: Լատինականութիւնը, սոսկ հեռանալով Եկեղեցուց, դավաճանեց այդ գիտակցութեանը և հռչակեց, թե ճշմարտութիւնը տրված է առանձին անհատ պապին, թող մի պապին, բայց ամեն դեպքում առանձին անհատականութեանն առանց Եկեղեցու, և պապն է տնօրինում բոլորի փրկութիւնը: Բողոքականութիւնը միայն առարկեց, թե ինչու է ճշմարտութիւնը տրված միայն պապին, և հավելեց՝ ճշմարտութիւնը և փրկութիւնը բաց են յուրաքանչյուր անհատի առջև՝ անկախ Եկեղեցուց: Յուրաքանչյուր անհատ վերածվեց անսխալական պապի:

Բողոքականությունը պապական թագ դրեց յուրաքանչյուր գերմանացի պրոֆեսորի գլխին և պապերի անհամար քանակով իսպառ վերացրեց Նկեղեցու գաղափարը, հավատը փոխարինեց առանձին անհատի բանականությամբ, իսկ փրկությունը Նկեղեցում փոխարինեց երազական վստահությամբ Քրիստոսի միջոցով առանց Նկեղեցու, փրկության հանդեպ, բոլորից անկախ անձնասեր առանձնության մեջ: Բողոքականի համար ճշմարտությունը միայն այն է, ինչ իրեն դուր է գալիս, ինչ ինքն է ճշմարտություն համարում: Գործնականում, անշուշտ, բողոքականները ևս ի սկզբանե զարտուղի ճանապարհներով, այսպես ասած, մաքսանենգությամբ ներմուծեցին Նկեղեցու վարդապետության որոշ տարրեր՝ գոնե վարդապետության ոլորտում ընդունելով որոշ հեղինակությունների: Բուն բողոքականությունը, ըստ էության լինելով եկեղեցական անիշխանություն՝ ինչպես ամեն անիշխանություն, գործնականում բացարձակ անիրագործելի էր և այդպիսով վկայեց այն անվիճելի ճշմարտության մասին, որ մարդկային հոգին իր բնությամբ եկեղեցական է:

Սակայն բողոքականությունը մարդկային անձնասիրության և ամեն տեսակի կամայականությունների սրտով էր: Եսապաշտությունն ու

կամայականությունը բողոքականության մեջ, կարծես, որոշակի դրոշմ է օրհնություն ստացան, ինչն իր անդրադարձն ունեցավ և այժմ էլ արտահայտվում է նախևառաջ հենց բողոքականության անհամար բաժանումների և տրոհման մեջ: Հենց բողոքականությունը հրապարակայնորեն հռչակեց այն մեծագույն հերյուրանքը, որ կարելի է քրիստոնյա լինել՝ չընդունելով որևէ Եկեղեցի: Սակայն, իր անդամներին սահմանափակելով որոշ պարտադիր հեղինակություններով և եկեղեցական կանոններով, բողոքականությունն այդպիսով խճճվում է՝ հայտնվելով անեղանելի հակասության մեջ. ինքն անձին ազատեց Եկեղեցուց և ինքն էլ որոշ սահմաններ է դնում այդ ազատությանը: Այստեղից էլ ծագում է բողոքականների այն մշտական ընդվզումն այնպիսի սակավ և մեղկ եկեղեցական մնացուկների դեմ, որոնք դեռ պահպանվում են նրանց հարանվանության պաշտոնական ներկայացուցիչների կողմից:

Միանգամայն հասկանալի է, որ հենց բողոքականությունն է առավելաբար համապատասխանում Արևմուտքում հաստատված ընդհանուր տրամադրությանը: Այնտեղ՝ Արևմուտքում, մարդիկ հասել են արտաքին կյանքի մեծ բարեկարգության և մեծամտացել են այդ հաջողություններից, սիրում են սեփական անձերը՝ մոռացության

տալու աստիճան և՛ Աստծուն, և՛ մերձավորներին: Արեմուտքի և՛ նորածե փիլիսոփայությունը, և՛ գեղարվեստական գրականությունը մեղսալի էսապաշտություն, մերձավորի հանդեպ արհամարհանք են քարոզում: Ինչպե՞ս հպարտ եվրոպացին կրնդունի Եկեղեցու մասին վարդապետությունը, երբ այն ընդունելու համար նախ և առաջ հարկ է հրաժարվել էսասիրությունից և կամայականությունից, հնազանդվել Եկեղեցուն և սովորել սիրել մարդկանց՝ իր անձը մյուսներից ցածր դասելով:

Ժամանակակից ռուս հասարակության կրոնական կյանքում կա բողոքականության անմիջական ազդեցությունը:

Մեր ռուս ռացիոնալիստական ողջ աղանդավորությունն իր գաղափարական արմատներով բողոքականություն է, որից երբեմն ուղղակիորեն և առաջացել է: Որտեղի՞ց են մեզ մոտ գալիս տարբեր աղանդավոր քարոզիչներ, եթե ոչ՝ բողոքական երկրներից: Այդ պատճառով Ուղղափառ Եկեղեցու հետ բողոքականների գրեթե բոլոր տարածայնությունները հանգում են Եկեղեցու մերժմանը՝ հանուն թվացյալ «ավետարանական քրիստոնեություն»:

Սակայն, անկախ բողոքականության կեղծ վարդապետությունից, բավականին շատ մարդ

այժմ մերժում է Եկեղեցին՝ յուրացնելով ընդհանրապես՝ Եկեղեցուց դուրս զարգացած և Եկեղեցու ոգուն բացարձակ խորթ և անգամ թշնամական տրամադրված արևմտաեվրոպական աշխարհայացքը:

Ավելի և ավելի է մեզ մոտ ներթափանցում արևմտաեվրոպական եսապաշտությունը: Մեր գրականությունը, որ անցյալում եղել է սիրո և բարոյական վերածննդի քարոզիչ, հատկապես մեծ Դոստոևսկու անմահ ստեղծագործություններում, վերջին տարիներին ի դեմս օրինակ՝ Գորկու, Անդրեևի և նրանց նմանների ծնկի եկավ հպարտ անձնասիրության և ինքնաստվածացման արևմտաեվրոպական Բահադի առջև:

Երբ ուղղափառ հասարակության մեջ ևս սերն արտամղվում է հպարտության և եսասիրության կողմից, երբ հպարտությունը ստանում է «վսեմ» պատվավոր անունը, հակառակ այն բանի, որ Եկեղեցու սուրբ հայրերը խոսում են միայն դիվային անձնասիրության և հպարտության մասին, – երբ ինքնաուրացումը փոխարինվում է ինքնահաստատմամբ, խոնարհ հնազանդությունը՝ հպարտ կամայականությամբ, այնժամ, անշուշտ, այս արատներին ուղղակի հակադիր առաքինությունների հետ անքակտելիորեն կապված

Եկեղեցու պայծառ ճշմարտությունը պատվում է
խիտ մշուշով:

Երկար տարիների ընթացքում ռուս մարդիկ
հետ են վարժվել եկեղեցական մտածողությու-
նից, աստիճանաբար նաև կորցրել են Եկեղեցու՝
իբրև նոր քրիստոնեական կյանքի մասին գաղա-
փարը: Բարի ժամանակ կար, երբ Ի. Տ. Պոսոշ-
կովն իր որդուն պատգամեց. «Իսկ քեզ, որդի իմ,
հաստատապես կտակում եմ և ...՝ քո բոլոր ուժե-
րով հավատարիմ մնա Սուրբ Արևելյան Եկեղե-
ցուն իբրև քեզ ծնող մոր..., և Սուրբ Եկեղեցու բո-
լոր թշնամիներին վանիր քեզանից և նրանց հետ
որևէ բարեկամական հարաբերություններ մի ու-
նեցիր, քանզի նրանք Աստծու թշնամիներն են»¹:
Մտքի ինչպիսի պարզություն և հստակություն:
Հստ Պոսոշկովի, Եկեղեցու հակառակորդն ան-
պայմանորեն Աստծու թշնամի է: Մտքի այսպիսի
պարզությունն այժմ շատերն արդեն կորցրել են,
և մեր օրերում կամաց-կամաց առաջացել է Քրիս-
տոսի հավատի ամենասարսափելի կեղծումը:
Ճիշտ այդ հավատն են դիտել իբրև սոսկ վարդա-
պետություն, որը կարելի է ընդունել մտքով:
Քրիստոնեությունը Քրիստոս Փրկչի կողմից
մարդկության վերականգնած եկեղեցական

¹ «Հայրական կտակ», հրատարակվել է խմբագրությամբ
Ե. Մ. Պրիլեժակի, СПб., 1893, էջ 3, 6:

կյանքի իմաստով գրեթե ամբողջապես մոռացության է տրվել: Քրիստոս Ինքն ասաց, որ կհաստատի Եկեղեցին, սակայն արդյո՞ք այժմ խոսում են Եկեղեցու մասին: Ո՛չ, այժմ նախընտրում են խոսել քրիստոնեության մասին, ընդ որում քրիստոնեությունը դիտարկելով իբրև ինչ-որ փիլիսոփայական կամ բարոյական ուսմունք: Քրիստոնեություն, սա հնչում է իբրև նոր-կանտականություն կամ նիցշեականություն: Եկեղեցու նենգափոխումը քրիստոնեությամբ իբրև աննկատ թույն ներթափանցում է անգամ եկեղեցական հասարակության գիտակցության մեջ: Այն աննկատ թույն է, որովհետև թաքնված է «պատմական քրիստոնեության» (այսինքն՝ Եկեղեցո՞ւ) թերությունների, ինչ-որ «մաքուր», «ավետարանական» քրիստոնեությանն իբրև թե դրա անհամապատասխանելու վերաբերյալ բարձրակոչ ճառերի գունագեղ քողի տակ: Ավետարանը և Քրիստոս հակադրվում են Եկեղեցուն, որը, չգիտես թե ինչու, կոչվում է «պատմական», կարծես թե կա, կամ ժամանակին եղել է, այլ՝ «ոչ պատմական» Եկեղեցի: Հիրավի, այստեղ սատանան լույսի հրեշտակի կերպարանք է առել: Նա ձևացնում է, թե ցանկանում է Քրիստոսի ճշմարտությունը մաքրել մարդկային կեղծիքից: Ակամայից հիշում ես հայր Վիկենտիոս Լիրինացու

իմաստուն արտահայտութիւնը, «Երբ տեսնենք, որ ոմանք առաքյալների կամ մարգարեների արտահայտութիւններ են վկայակոչում՝ ի մերժումն տիեզերական հավատի, չպետք է երկմտենք, որ նրանց շուրթերով սատանան է խոսում: Իսկ պարզամիտ ոչխարներին աննկատ մերձենալու համար թաքցնում են իրենց գալլալին կերպարանքը՝ չհրաժարվելով գալլալին դաժանութիւնից, և իբրև գեղմ փաթաթվում են Սուրբ Գրքի արտահայտութիւններով, որպեսզի, մորթու փափկութիւնը զգալով, ոչ ոք չվախենա նրանց սուր ատամներից»²:

Դա հպարտ և անձնապաշտ մարդու հատկութիւն է, ով ամեն ինչի մասին դատում է համարձակ և ինքնավստահ, անգամ երբ չի հասկանում, թե ինչի մասին է խոսում: Հատկապես դա հստակ երևում է հավատի հարցերում: Այստեղ բոլորը ցանկանում են ուսուցիչներ լինել, առաքյալներ և մարգարեներ: Այստեղ չեն ամաչում անգամ իրենց բացարձակ տգիտության համար: Այլ ուորտներում ոչինչ չիմացող մարդիկ նախընտրում են գոնե լռել: Սակայն հավատի հարցերում մեզանում այժմ ամենից շատ դատողութիւններ են անում և քարոզում նրանք, ովքեր

² “Напоминания”, 1, 25-26. Казань, 1904, էջ 47-48:

ամենից քիչն են այդ հարցերից հասկանում: Դեռ Պողոս առաքյալն էր ասում, որ նա, ով վրիպել է սուրբ սրտից բխած սիրուց, բարի խղճմտանքից և անկեղծ հավատից, խոտորվել է խոսքերի ունայնության մեջ՝ ցանկանալով լինել օրենքի վարդապետ՝ չիմանալով՝ ինչ է խոսում, ոչ էլ հասկանալով այն բաները, որոնց վրա պնդում է (Ա Տիմ. Ա 5-7): Ժամանակակից դատարկաբանության մեջ հատկապես հաճախ ներթափանցում է մի տխուր թյուրիմացություն, որը կարելի է կոչել Եկեղեցուց քրիստոնեության անջատում: Դրա համար էլ մարդիկ սկսում են չափից ավելի ինքնավստահ դատել հավատի գործերի մասին, հնարավոր են նկատում ինչ-որ քրիստոնեության գոյություն ոչ միայն Եկեղեցուց անկախ, այլև՝ Եկեղեցուն թշնամի: Ենթադրում են, որ կարելի է քրիստոնյա լինել և միևնույն ժամանակ Եկեղեցու դեմ թշնամանալ: Այժմ բացարձակ տարբեր կերպ են վերաբերվում Եկեղեցուն և քրիստոնեությանը: Մարդիկ, ովքեր քիչ են մտածում Աստծու և հավիտենականության մասին, այնուհանդերձ պատշաճության պարտք են նկատում գտնել խոսքի մեջ քրիստոնեության մասին հարգանքով արտահայտվել: Քրիստոնեության հանդեպ ամբողջական և բացահայտ արհամարհանքի, բացահայտ թշնամության հերթը դեռ չի հա-

սել: Այդ սահմանին են հասել միայն քչերը՝ «սատանայից բռնվածները» (Գործք Ժ 38), առավել «առաջագեմ» (անշուշտ, եթե նկատի ունենանք դժոխքի ուղղությանը) մերժված անձինք: Իսկ շարքային «քաղքենիները», կրկնում ենք, քրիստոնեության մասին սովորաբար խոսում են որոշ պատկառանքով. «Քրիստոնեությունը, անշուշտ, բարձր և մեծ ուսմունք է: Ո՞վ է այն վիճարկում»: Մոտավորապես այսպես են արտահայտվում քրիստոնեության մասին: Սակայն միևնույն ժամանակ կարծես լավ վարքի հատկանիշ է նկատվում եկեղեցական ամեն ինչի հանդեպ ինչ-որ անգիտակից թշնամանք ունենալը: Մեր ժամանակակիցներից շատերի հոգում ինչ-որ կերպ միմյանց հետ հաշտ ապրում են հարգանքը քրիստոնեության հանդեպ և արհամարհանքը եկեղեցու նկատմամբ: Ամեն դեպքում գրեթե ոչ ոք չի ամաչում իրեն կոչել քրիստոնյա, սակայն եկեղեցու մասին անգամ լսել չի ուզում և ամաչում է որևէ կերպ ցույց տալ իր եկեղեցականացված լինելը: Համաձայն գրանցամատյանների «ուղղափառ դավանության» մարդիկ ինչ-որ անհասկանալի շարախնդությանը մատնանշում են եկեղեցական կյանքի իրական, իսկ ավելի հաճախ՝ մտացածին թերությունները, չեն ցավում այդ թերությունների համար ըստ առաքյալի խոսքի,

թե՛ «Եվ եթե մի որևէ անգամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները» (Ա Կորնթ. ԺԲ 26), այլ ուղղակի չարախնդում են: Մեր այսպես ասած «առաջադիմական» մամուլում կան բազում անձինք, որոնք գոյություն համար միջոցներ են հայթայթում բացառապես եկեղեցական հաստատությունների, եկեղեցական նվիրապետության ներկայացուցիչների հասցեին՝ հայհոյախոսություններ: Եկեղեցական ամեն երևույթի հանդեպ զրպարտությունը ոմանց համար դարձել է պարզապես շահաբեր արհեստ: Սակայն այդ ակնհայտ կեղծիքին առանց կասկածելու շտապում են հավատալ նույնիսկ նրանք, ովքեր իրենց ճշմարիտ քրիստոնյա են նկատում: Չար մարդիկ են իրենց թշնամիների մասին վատ բան լսելիս շտապում հավատալ դրան՝ վախենալով, թե՛ հայտնի չգառնա դրա սուտ լինելը: Շատերի մոտ առկա է ճիշտ նույն վերաբերմունքը եկեղեցու հանդեպ: Եկեղեցին նրանց համար կարծես թշնամի լինի, որի մասին վատ լուրեր լսելը միշտ հաճելի է մեղավոր մարդուն: Այստեղ մենք կրկին տեսնում ենք, թե որքան մեծ է ներկայիս քրիստոնեության անջատումը եկեղեցուց, իրենք իրենց քրիստոնյա են համարում, սակայն չեն ցանկանում եկեղեցու մասին որևէ բարի բան լսել: Առավել ևս հավատից ընդհանրապես հեռու միջա-

վայրում ակնհայտ է հասկացությունների աներևակայելի խառնաշփոթ: Երբ Եկեղեցուց հեռու մարդիկ սկսում են նրա մասին դատել, հստակ երևում է, որ նրանք բացարձակապես չեն հասկանում քրիստոնեության և Եկեղեցու էությունը, դրա համար էլ Եկեղեցու արժանիքները նրանց թերություններ են թվում:

Օրինակ՝ ժամանակին Եկեղեցուց Տոլստոյի արտաքսումը Եկեղեցու հանդեպ ինչ-որ կույր թշմամանքի բռնկումներ հարուցեց: Արդյո՞ք Եկեղեցին մեղավոր է, որ Տոլստոյը հեռացավ նրանից՝ դառնալով նրա ակնհայտ և վտանգավոր թշնամին: Չէ որ նա ինքը կապերը խզեց Եկեղեցու՝ իբրև տեսանելի հանրության հետ, մերժեց ընդհանրապես Եկեղեցու անհրաժեշտությունը՝ այն վտանգավոր հաստատություն համարելով: Նման անդամներ պահելն արդյո՞ք չէր նշանակի, որ Եկեղեցին մերժում է ինքն իրեն: Սակայն եթե այդպես է, ապա ի՞նչ են նշանակում բոլոր այդ հարձակումները Եկեղեցու դեմ մամուլում, հավաքույթներում և բանավոր զրույցներում: Միտքը հրաժարվում է դրականորեն հասկանալ այդ ամենը: Անհնար է բանականության գոնե չնչին հատիկ գտնել այն ճառերի և արարքների մեջ, որոնց մասին կարդացել և լսել ենք: Չէ որ յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն իրեն

անկապտելի իրավունք է վերապահում հեռաց-
նելու այն անդամներին, ովքեր դավաճանել են
կուսակցական հայացքներին և սկսել են գործել
ի վնաս այդ կուսակցության: Սակայն Ուղղա-
փառ Եկեղեցին չգիտես ինչու չի կարող հեռաց-
նել նրան, ով ինքն է հեռացել Եկեղեցուց և դար-
ձել նրա թշնամին: Միայն Եկեղեցին, չգիտես թե
ինչու, իր ծոցում պիտի պահի իր անմիջական
թշնամիներին: Ո՞վ կհանդիմաներ և կմեղադրեր
ինչ-որ սոցիալ-դեմոկրատների կամ կադետնե-
րի, եթե նրանք խզեին կապերը միապետական-
ների ճամբարն անցած իրենց նախկին անդամի
հետ, և այդ խզման մասին հրապարակայնորեն
հայտարարեին՝ հայտնելով իրենց անդամնե-
րին տեղի ունեցած վտարման մասին: Սակայն
ամենից տխուրն այն է, որ Եկեղեցուն շատերն
անարգում են հանուն քրիստոնեության: Հազար
անգամ առիթ է եղել լսելու կամ կարդալու, թե՝
«Ահա Տոլստոյին հեռացրել են, սակայն արդյո՞ք
ինքը ճշմարիտ քրիստոնյա չէր»: Մոռանալով
Տոլստոյի բոլոր սրբապղծությունները և Քրիս-
տոս Աստվածամարդու՝ նրա մերժումը՝ այդ ճառե-
րը կրկնում էին երևի թե անկեղծ մարդիկ և ոչ
միայն՝ արհեստավարժ թերթային ստախոսնե-
րը: Կրկին իր մասին է վկայում ժամանակակից
մտքերի մեջ ամրորեն հաստատված գաղափարը՝

առանց Եկեղեցու և անգամ Եկեղեցու հանդեպ խիստ թշնամական ինչ-որ «ճշմարիտ քրիստոնեություն» հավանական գոյություն մասին:

Սակայն արդյո՞ք հնարավոր էր որևէ նման բան, եթե հստակ լիներ Եկեղեցու գաղափարը, եթե այն չփոխարինվեր այլ՝ բացարձակապես անհասկանալի և անորոշ չափանիշներով: Հնարավոր է արդյոք պատկերացնել, որ առաքելական դարում քրիստոնեական Եկեղեցին հեթանոսների կողմից հանդիմանվեր այն բանի համար, որ հեռացրել է անպիտան անդամների, օրինակ՝ հերետիկոսների: Սակայն առաջին դարերում Եկեղեցուց հեռացումը եկեղեցական կարգապահության ամենասովորական միջոցն էր, և ամենքն այդ միջոցը լիովին օրինական և բավականին օգտակար էին համարում: Իսկ ինչո՞ւ: Այն պատճառով, որ այդ ժամանակ Եկեղեցին վառ և որոշակի մեծություն էր, Եկեղեցի էր և ոչ թե՝ ինչ-որ քրիստոնեություն: Այն ժամանակ նման հիմար մտքի տեղ չէր տրվում, թե քրիստոնեությունը մեկ բան է, իսկ Եկեղեցին՝ մեկ այլ, կարծես քրիստոնեությունը հնարավոր է և առանց Եկեղեցու: Այն ժամանակ թշնամանքը Եկեղեցու դեմ թշնամություն էր նաև քրիստոնեության դեմ: Իսկ Եկեղեցու դեմ թշնամությունը՝ հանուն ինչ-որ քրիստոնեության, միայն մեր տխուր օրերին հատուկ երևույթ է: Երբ

3 - Իլարիոն արք.

քրիստոնեությունն աշխարհին ներկայանում էր հենց Եկեղեցով, այն ժամանակ աշխարհը քաջ գիտակցում էր և ակամա ընդունում, որ Եկեղեցին և քրիստոնեությունը նույնն են:

Այժմ հենց կարիք կա ինչ-որ կտրուկ հստակության և Եկեղեցու տարանջատման այն ամենից, ինչը Եկեղեցի չէ: Այժմ մեզ մոտ Եկեղեցում պահում են անխտիր բոլորին, նույնիսկ նրանց, ովքեր իրենք են խնդրում իրենց հեռացնել, ինչպես և եղավ Լև Տոլստոյի բանագրումից հետո: Կարելի է ասել, եկեղեցական որևէ կարգապահություն չկա. աշխարհիկ մտավորականների համար ամեն ինչ դարձել է ոչ պարտադիր՝ և՛ արարողություններին հաճախելը, և՛ խոստովանությունը, և՛ հաղորդությունը: Դրա համար Եկեղեցին, իբրև տեսանելի հասարակություն, ներկայումս չունի հստակ և որոշակի սահմաններ, որոնք կառանձնացնեին նրան «արտաքիններից»:

Երբեմն թվում է, որ մեր Եկեղեցին ցրված է, կարծես ինչ-որ տարընթացության մեջ է: Չգիտեմ՝ ո՛վ է յուրային, ո՛վ է մեր ոսոխը: Մտքերում ինչ-որ անիշխանություն է տիրում: Չափից ավելի շատ «ուսուցիչներ» են հայտնվել: Եկեղեցական «մարմնի մեջ պառակտումներ» (Ա. Կորնթ. ԺԲ 25) են գնում: Հին Եկեղեցում եպիսկոպոսը բեմից էր ուսուցանում. այժմ նա, ով ինքն իր մասին ասում

է, թե «գալիթում» է՝ նույնիսկ՝ սոսկ «եկեղեցու մոտ», համարում է, որ իրավասու է ուսուցանել ողջ եկեղեցուն՝ նրա նվիրապետութեամբ հանդերձ: Նա տեղեկանում և կարծիք է կազմում եկեղեցական գործերի մասին եկեղեցու հանդեպ թշնամաբար տրամադրված թերթերից, որտեղ եկեղեցական հարցերի մասին գրում են կա՛մ կարգալուծ եկեղեցականները և ամեն տեսակ եկեղեցական ուրացողները, կա՛մ էլ հերսոտած և հանդուգն հեգնողները (Բ Պետր. Գ 3), եկեղեցու հետ որևէ առնչություն չունեցող և թշնամանքից բացի նրա հանդեպ ոչինչ չզգացող մարդիկ, անգամ Քրիստոսի ուղղակի թշնամիները:

Վիճակը տխուր է: Մեր իրականության այս տխուր վիճակը նրանց, ում համար թանկ է հավատը և հավիտենական կյանքը, պետք է մղի քննելու ժամանակակից մեր հիմնական մոլորությունը, որով կարելի է քրիստոնեությունն անջատել եկեղեցուց: Աստծու խոսքի և Սուրբ Հայրերի գրվածքների առաջնորդությամբ հարկ է ողջ խորությամբ մտածել հետևյալ կարևոր հարցի մասին, թե հնարավո՞ր է քրիստոնեությունն առանց եկեղեցու:

Սուրբ Ավետարանն ընթերցողի համար Քրիստոս Փրկչի կյանքը շատ մեծ գրվագներ է պարունակում, որոնք հոգին լցնում են հենց նշանա-

կալիուծյան որոշակի հատուկ զգացումով: Սակայն, հնարավոր է, ողջ մարդկության կյանքում մեծագույն րոպեն հենց այն էր, երբ հարավային գիշերվա մթության մեջ, կանաչող ծառերի կախված կամարների ներքո, որոնց միջով կարծես երկինքը հայում էր մեղսալի երկրի վրա առկայծող պայծառ աստղերով, Տեր Հիսուս Քրիստոս քահանայապետական իր աղոթքում բացականչեց. «Սո՛ւրբ Հայր, պահի՛ր նրանց Քո անունով, որով ինձ տվեցիր, որպեսզի լինեն մի, ինչպես Մենք էլ մի ենք... Սակայն միայն նրանց համար չէ, որ աղաչում եմ, այլև նրանց խոսքի միջոցով բոլոր ինձ հավատացողների համար, որպեսզի ամենքը մի լինեն. ինչպես դու, Հա՛յր, իմ մեջ, և ես՝ քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, և որպեսզի աշխարհն էլ հավատա, թե դո՛ւ ուղարկեցիր ինձ» (Հովհ. Ժէ 11, 20-21): Քրիստոսի այս խոսքերին պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Դրանցում հստակ սահմանված է ողջ քրիստոնեության իսկությունը. քրիստոնեությունն ինչ-որ վերացական ուսմունք չէ, որ մտքով է ընկալվում և յուրաքանչյուրի կողմից առանձնաբար պահվում: Ո՛չ, քրիստոնեությունն ընդհանուր կյանք է, որում առանձին անհատներ այնքան են միավորվում միմյանց հետ, որ նրանց միությունը կարելի է նմանեցնել Սուրբ Երրորդության անձերին: Զէ՞

որ Քրիստոս չի աղոթում միայն նրա համար, որ
 Իր վարդապետությունը պահպանվի, տարած-
 վի ողջ աշխարհով մեկ: Նա աղոթում է Իրեն բո-
 լոր հավատացողների կյանքի միություն համար:
 Քրիստոս աղոթում է Իր Երկնավոր Հորը երկրի
 վրա ողջ մարդկության բնական միության հաս-
 տատման կամ, ավելի ճիշտ, վերականգնման
 համար: Մարդկությունը ստեղծվել է մեկ արյու-
 նից (Գործք Ժէ 26): Սուրբ Բարսեղ Մեծը գրում է.
 «Մարդկանց միջև չէին լինի բաժանումներ, հա-
 կասություններ, պատերազմներ, եթե մեղքը չհա-
 տեր էությունը...»: Եվ «դա է կարևորը մարմնա-
 ցյալ Փրկչի տնօրինության մեջ՝ մարդկային էութ-
 յունն ինքն իրեն հետ միության բերել և Փրկչի
 հետ և, վերացնելով սատանայական բաժանումը,
 վերականգնել նախաստեղծ միությունը, ինչպես
 լավագույն բժիշկը բազում մասերի բաժանված
 մարմինը դարմանիչ միջոցներով կրկին միավո-
 րում է»³: Ահա, ոչ թե միայն առաքյալների, այլև
 մարդկանց՝ Ի Քրիստոս բոլոր հավատացյալնե-
 րի, իրենց խոսքով, միությունն է, որ կազմում է
 Եկեղեցին: Երկրային առարկաների մեջ չգտնվեց
 որևէ բան, որի հետ հնարավոր լիներ համեմատել
 փրկված մարդկանց նոր հասարակությունը: Երկ-

³ Подвижнические уставы, гл. XVIII Творения, ч. 5, 4-е
 изд. Свято-Троицкая Сергиева Лавра, 1902, с 359-360:

րի վրա չկա միություն, որի հետ կարելի էր համեմատել եկեղեցական միությունը: Այդպիսի միություն գտնվեց միայն երկնքում: Երկնքում Հոր, Որդու և Սուրբ Հոգու անզուգական սերը միավորում է երեք անձանց ի մի էություն, այնպես որ արդեն ոչ թե երեք Աստվածներ, այլ՝ մեկ Աստված՝ ապրող եռամիասնական կյանքով: Այդպիսի սիրո, որը շատերին կարող էր միաբանել, կոչված են նաև մարդիկ, ինչի համար և Քրիստոս ազոթում էր Երկնավոր Հորը, «որպեսզի այն սերը, որով ինձ սիրեցիր, նրանց մեջ լինի» (Հովհ. Ժէ 26):

Քրիստոսի խոսքի մեջ Եկեղեցու ճշմարտությունն ամենասերտ կապի մեջ է Ամենասուրբ Երրորդությունից խորհրդի հետ: Եկեղեցուն անդամագրված մարդիկ, որոնք սիրեցին միմյանց, նման են Ամենասուրբ Երրորդության երեք անձերին, որոնց նրանց սերը միավորում է մեկ էության: Եկեղեցին բազում անձանց համագոյությունն է, որ ստեղծվում է միմյանց հանդեպ նրանց ընդհանուր սիրով: Քրիստոսի քահանայապետական ազոթի բերված խոսքի մեջ հենց այս գաղափարն են նկատում Եկեղեցու նշանավոր հայրերից և ուսուցիչներից շատերը՝ Ս. Կիպրիանոս Կարթագենացին, Ս. Բարսեղ Մեծը, Ս. Գրիգոր Նյուսացին, Ամբրոսիոս Մեդիոլանցին, Իլարիոս Պիկտավացին, Ս. Կյուրեղ Ալեքսանդ-

րացին, Օգոստինոսը և Հովհաննես Կասսիանը: Կարճ դատողություններ բերենք հայրերի այս մեծ և փառավոր բույլից: Այսպես՝ Ս. Կիպրիանոս Կարթագենացին Մագնոսին գրում էր. «Տերը, մեզ ուսուցանելով, որ միությունը սկիզբ է առնում Աստվածային իշխանությունից, հաստատում է և ասում. «Ես և իմ Հայրը մի ենք» (Հովհ. Ժ 30), և Սուրբ Եկեղեցին ուղղելով դեպի այդ միասնությունը՝ ավելացնում է. «և պիտի լինի մի հոտ և մի հովիվ» (Հովհ. Ժ 16)⁴: Իսկ «Տերունական աղոթքի մասին» իր գրվածքում նա ասում է. «Նա (Տերը), չբավարարվելով, որ Իր արյամբ քավեց մեր մեղքերը, դեռ խնդրում էր մեզ համար: Իսկ խնդրելով, տեսնե՞ք, ինչպիսի ցանկություն ուներ Նա, որ մենք էլ նույն միության մեջ լինենք, ինչպես Հայր և Որդի մի են»⁵: Ահա թե ինչ է գրում Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին. «Միաբանության մեջ ընկալելի անբաժան սիրո, ներդաշնակության և միության օրինակով և պատկերով Քրիստոս, վերցնելով էական միությունը, որը Հայրն ունի Իր հետ, և Նա Իր կողմից Հոր հետ, ցանկանում է, որ մենք էլ ինչոր ձևով միաբանվենք միմյանց հետ, ըստ երևույթին, ինչպես Սուրբ և Համագոյ Նորորդությունը,

⁴ Письмо 62. Творения, ч. 1, 2-е изд. Киев, 1891, с 363-364:

⁵ Святый Киприан Карфагенский, О Молитве Господней, Творения, ч. 2, с. 221, 217.

այնպես որ Եկեղեցու մարմինը մեկ է նկատվում, որ վերափոխվում է վերընթաց ի Քրիստոս երկու ժողովուրդների ձուլման և միացման միջոցով նոր կատարյալի դասի մեջ. Աստվածային միության և Սուրբ Երրորդության էական նույնականությունը, ինչպես և ամենակատարյալ փոխներթափանցումը պետք է արտացոլվեն հավատացյալների համախոհության և միաբանության միության մեջ»։ Ս. Կյուրեղը ցույց է տալիս նաև «Բնական միությունը, որով կապվում ենք մենք միմյանց հետ և ամենքս Աստծու հետ՝ թերևս ոչ առանց մարմնական միության»⁶։

Հետևաբար, Քրիստոսի ողջ երկրային առաքելությունը հարկ է դիտարկել ոչ միայն որպես վարդապետություն։ Քրիստոս աշխարհ եկավ ոչ միայն սոսկ նրա համար, որ մարդկանց մի քանի նոր ճշմարտություններ հաղորդի։ Ո՛չ, Նա եկավ, որպեսզի ստեղծի մարդկության համար բացարձակապես նոր կյանք, այսինքն՝ Եկեղեցին։ Քրիստոս ինքն էր ասում, որ շինում է Եկեղեցին (Մատթ. ԺԶ 18)։ Հստ Փրկչի, մարդկային այս նոր հասարակությունն էապես տարբերվում է տար-

⁶ Толкование на Евангелие Иоанна, Кн. 11, гл. 11. - В кн.: Творения. Сергиев Посад: Изд. Московской Духовной Академии, 1912, ч. 15, с. 105-112. Միայն վերջերս այս մտքին աստվածաբանական գիտության ուշադրությունը սևեռեց միտրոպոլիտ Անտոնին (Խոռապովիցկի)։

բեր հասարակությունների մեջ մարդկանց զանազան այլ խմբավորումներից. Քրիստոս Ինքը հաճախ Իր Եկեղեցին կոչում էր Աստծու Թագավորություն և ասում, որ այս Թագավորությունն այս աշխարհից չէ (Հովհ. ԺԴ 27, ԺԵ 19, ԺԷ 14, 16, ԺԸ 36), այսինքն՝ վերջինիս բնույթն այս աշխարհից չէ, աշխարհական չէ, այն նման չէ քաղաքական, երկրային թագավորություններին:

Եկեղեցու՝ իբրև բացարձակ նոր հանրության մասին գաղափարն ի տարբերություն, օրինակ, պետական հանրության, բավականին խորը և սքանչելի արտահայտվել է Սուրբ Հոգու գալստյան օրվա կանոնում, երբ Եկեղեցին հենց հիշատակում է և տոնախմբում իր սկզբնավորումը. «Երբ Բարձրյալն իջնելով խառնեց լեզուները, Նա բաժանեց ժողովուրդներին: Իսկ երբ բաշխեց հրեղեն լեզուները, բոլորին միության կոչեց, որի համար և փառավորում ենք Ամենասուրբ Հոգուն»: Այստեղ Եկեղեցու հիմնադրումը համեմատվում է Բաբելոնյան աշտարակաշինության և «լեզուների խառնման» հետ: Հենց այդ ժամանակ՝ աշտարակաշինության ընթացքում, Աստված իջնելով լեզուները խառնեց և բաժանեց, այսինքն՝ ժողովուրդներին:

Բաբելոնյան աշտարակաշինության մասին աստվածաշնչյան պատմությունը բավականին խոր իմաստ ունի: Ճիշտ այդ պատմությունից

առաջ Աստվածաշունչը հայտնում է մեղավոր մարդկության առաջին հաջողությունների մասին՝ մշակույթի և քաղաքացիական համագոյակցության ոլորտում, ճիշտ աշտարակաշինությունից առաջ մարդիկ սկսեցին քարե քաղաքներ կառուցել: Եվ ահա Տերը խառնեց երկրի վրա ապրողների լեզուները, այնպես որ դադարեցին հասկանալ միմյանց և ցրվեցին ողջ երկրով (Ծննդ. ԺԱ 4, 7-8): Բաբելոնյան այդ աշտարակաշինությունը քաղաքացիական կամ պետական հանրության կարծես մի տեսակ էր՝ հիմնված միայն մարդկային ճշմարտության, իրավունքի վրա:

Մեր ուսս փրկիսոփա Վ. Ս. Սոլովյովն այսպես է սահմանել իրավունքը. «Իրավունքը չարի հայտնի դրսևորումներն արգելող որոշակի նվազագույն բարու և կարգավորության իրագործման պարտադիր պահանջն է»⁷: Սակայն, եթե անգամ ընդունենք իրավունքի այս սահմանումը, ապա ականհայտորեն այն երբեք չի համընկնում քրիստոնեական սիրո հետ: Իրավունքը վերաբերում է արտաքինին և ոչ՝ էությունը: Մարդկային իրավունքի վրա հիմնված հասարակությունը երբեք չի կարող մարդկանց միաբանել: Միությունը քանդվում է անձնասիրությամբ, եսամոլությամբ,

⁷ Оправдание добра, 2-е изд. Б. М., 1899, с. 462.

իսկ իրավունքը չի վերացնում եսասիրությունը, ընդհակառակը՝ միայն հաստատում է այն՝ պահպանելով այլ մարդկանց եսասիրության հարձակումներից: Իրավունքի վրա հիմնված պետության նպատակն այն է, որ հնարավորության պարագայում ստեղծի այնպիսի կարգ, որի ժամանակ իր յուրաքանչյուր անդամի անձնասիրությունը բավարարություն գտնի՝ միևնույն ժամանակ չխախտելով մյուսի շահերը: Նման կարգ հաստատելու ճանապարհը կարող է մեկը լինել՝ հասարակության որոշ անդամների եսամոլության որոշակի սահմանափակումը: Սրանում է իրավունքի անլուծելի հակասությունը. այն հաստատում է եսասիրությունը, բայց ինքն էլ այն սահմանափակում է: Դրա համար մարդկային իրավունքի վրա հիմնված հասարակությունը մշտապես իր մեջ կրում է իր քայքայման սերմերը, քանզի պահպանում է անձնասիրությունը, որը մշտապես քայքայում և քանդում է ամեն մի միություն: Բաբելոնյան աշտարակի ճակատագիրն իրավական հասարակության ճակատագիրն է. այդ հասարակության մեջ հաճախ պետք է տեղի ունենա «լեզուների խառնում», երբ մարդիկ դադարում են հասկանալ միմյանց, թեպետ և խոսում են միևնույն լեզվով: Իրավական կարգը հաճախ փոխարինվում է սարսափելի անկարգությամբ:

Ճիշտ այսպիսի իրավական, զուտ երկրային հասարակությանն է հակադրվում քրիստոնեական հասարակությունը՝ Եկեղեցին: Իսկ երբ բաշխեց հրեղեն լեզուները, բոլորին միության կոչեց: Քրիստոս Եկեղեցին ստեղծում է ոչ թե մարդկային անձնասիրության պահպանության, այլ դրա ամբողջական վերացման համար: Եկեղեցական միության հիմքում դրված են ոչ թե անձնական անձնասիրությունը պաշտպանող իրավական հիմունքները, այլ անձնասիրությանը հակառակ սերը: Իր հրաժեշտի խոսքում Քրիստոս ասաց աշակերտներին. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցեք: Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. ԺԳ 34-35):

Եկեղեցական միության ահա այս նոր հաստատությունը ոչ թե ներքուստ բաժանված անձնավորությունների մեխանիկական արտաքին համախմբում, այլ օրգանական միություն է ստեղծում: Ինքը Քրիստոս եկեղեցական միությունը նմանեցնում էր ծառի և իր ճյուղերի օրգանական միության (Հովհ. ԺԵ 1-2): Սակայն առավել մանրամասն Եկեղեցու օրգանական անքակտելի միության մասին խոսում է Պողոս առաքյալը: Ծառի հետ Եկեղեցու համեմատությունը կա նաև

Պողոս առաքյալի մոտ (Հռոմ. ԺԱ. 17-24), սակայն ավելի հաճախ Պողոս առաքյալն Եկեղեցին կոչում է «մարմին»⁸: Արդեն իսկ Եկեղեցին «մարմին» կոչելով՝ մատնանշում է նրա միությունը. երկու մարմիններ չեն կարող փոխկապակցված լինել: Սակայն ի՞նչ է նշանակում Եկեղեցու համար կիրառվող «մարմնի» կերպարը: Եկեղեցու համար կիրառված «մարմնի» կերպարը լավագույնս բացահայտում է ինքը՝ Պողոս առաքյալը: Շատերը, այսինքն՝ Եկեղեցուն բոլոր անդամագրվողները, կազմում են ի Քրիստոս մեկ մարմին, իսկ առանձին-առանձին մեկը մյուսի համար անդամներ են (Հռոմ. ԺԲ 5, Ա Կորնթ. ԺԲ 27): «Ինչպես մեկ է մարմինը և ունի բազում անդամներ, և մարմնի այդ բազում անդամները բոլորը մեկ մարմին են... Այսպես, մարմինը մեկ անդամ չէ, այլ՝ բազում: Եթե ոտքն ասի՝ քանի որ ձեռք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նույն մարմնից լինելուց: Եվ եթե ականջն ասի՝ քանի որ աչք չեմ, այդ մարմնից չե՛մ, դրանով չի դադարում նույն մարմնից լինելուց... Բայց արդ, Աստված դրեց անդամները, նրանցից ամեն մեկը՝ մարմնի մեջ, ինչպես որ կամեցավ» (Ա Կորնթ. ԺԲ 12, 14-16, 18): «Ինչպես մի մարմնի մեջ բազում անդամ-

⁸ Հռոմ. ԺԲ 4, 5, Ա Կորնթ. 2 15, Ժ 17; ԺԲ 13, 27, Եփ. Ա 23, Դ 4, 12, 16, 25, Ե 23, 30, Կող. Ա 18, 24, Բ 19, Գ 15:

ներ ունենք, և բոլոր անդամները նույն գործը չեն անում» (Հռոմ. ԺԲ 4): «Աչքը չի կարող ասել ձեռքին, թե՛ ինձ պետք չես, և կամ նույն ձեռքը գլուխը՝ ոտքերին, թե՛ ինձ պետք չեք... Աստված կազմեց մարմինը և նվազ պատվավորին առավել պատիվ տվեց, որպեսզի մարմնի մեջ բաժանումներ չլինեն, այլ որպեսզի այդ անդամները նույն հոգը տանեն միմյանց նկատմամբ: Եվ եթե մի որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները, և եթե մի անդամը փառավորվում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները» (Ա Կորնթ. ԺԲ 21, 24-26, հմմտ. Հռոմ. ԺԲ 6-9):

Բայց Եկեղեցում, եկեղեցական հասարակական կյանքում ինչպե՞ս է հնարավոր մարդկանց նման միության իրագործումը: Զե՞ որ մարդու բնական մեղսալի վիճակն ավելի համապատասխանում է միայն իրավական հասարակության ստեղծմանը, որովհետև մեղքն ինքնին ինքնահաստատում կամ անձնասիրություն է, որ պահպանվում է քաղաքացիական իրավունքով: Իրապես, մարդու համար, քանի դեռ նա պաշտպանելու է իր մեղավոր վիճակը, կատարյալ միությունը կլինի դատարկ երազանք, որին վիճակված չէ իրագործվել իրականության մեջ: Սակայն այստեղ ամեն ինչ լուծվում է հենց Եկեղեցու ճշմարտությամբ: Քրիստոս ոչ թե ուսուցանել է միայն

միութեան, Եկեղեցու մասին, այլ հաստատելով Եկեղեցին՝ պատվիրան է տվել՝ սիրեցե՛ք միմյանց. սակայն միայն այդ պատվիրանը բացարձակ անբավարար է: Այդ պատվիրանը, ինչպես և որևէ այլ պատվիրան, ինքնին չի կարող որևէ բան ստեղծել, եթե մարդ ուժ չունի դրա իրագործման համար: Եթե քրիստոնեությունը սահմանափակվեր սիրո մասին վարդապետություն միայն, այն անօգուտ կլիներ, քանզի մեղքից խեղված մարդկային բնության մեջ ուժ չկա այդ վարդապետությունը կյանքի կոչելու: Սիրո մասին խոսվել է և Հին Ուխտում, և անգամ հեթանոսներն են խոսել, սակայն դա բավարար չէ: Գիտակցությունն ընդունում է, որ սիրո մասին պատվիրանը լավն է, սակայն մարդն իր մեջ մշտապես հանդիպելու է մեկ այլ օրենքի, որ հակամարտում է մտքի օրենքի հետ և գերի դարձնում իրեն մեղքի օրենքին (Հռոմ. է 22-24): Լավ մարդ լինելու համար սոսկ բավարար չէ միայն գիտենալ, թե ինչն է լավ և ինչը՝ վատ: Արդյո՞ք մենք կասկածում ենք, որ մեղանչելը վատ է: Ապա ինչո՞ւ ենք մեղանչում՝ լավ գիտենալով, որ դա վատ է: Որովհետև՝ մի բան է գիտենալը, և այլ է՝ ապրելը: Ով հետևում է իր հոգու շարժումներին, լավ գիտի, թե ինչպես են մեղքերն ու կրքերը պայքարում գիտակցության հետ և որքան հաճախ են հաղթում նրան:

Գիտակցությունը կրքերի հորձանքի տակ կքու՞մ է. մեղքը կարծես մառախուղի նման փակու՞մ է մեզանից ճշմարտության արեգակը, կապու՞մ մեր հոգու բոլոր բարի ուժերը: Մեղքի ուժը գիտակցող հոգին միշտ պատրաստ է Մանասե թագավորի հետ ասել. «Երկաթե կապանքներից բռնված խոնարհվել եմ և հանգիստ չունեմ»⁹: Նման տխուր իրավիճակում կարո՞ղ է միայն սիրո վարդապետությունը մեզ օգնել: Բայց Քրիստոսի գործի ուժը և նշանակությունն այն է, որ չի սահմանափակվում միայն ուսմունքով: Մարդուն տրվում են նոր ուժեր, որով նրա համար հնարավոր է դառնում նոր եկեղեցական միությունը: Այդ ուժերը տրված են նախևառաջ նրանով, որ մարդկությունն Աստծու Որդու մարմնավորմամբ սերտորեն միացավ Աստծու հետ: Եկեղեցում է շարունակվում մարդու մշտական և անփոփոխ միացումը Քրիստոսի հետ: Այդ միությունը հոգևոր կյանքի աղբյուր է, իսկ առանց Քրիստոսի հետ միության՝ հոգևոր մահ: Ո՞րն է այդ միությունը: Քրիստոս ասում էր. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած. թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի. և այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որը ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունե-

⁹ Գրաբար Ս. Գրքում՝ Մանասե թագավորի աղոթքը, 6 (ծնթ. խմբ.):

նա: Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չըմպեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է իմ մարմինը և ըմպում՝ իմ արյունը, հավիտենական կյանք ունի. և ես նրան վերջին օրը հարույթուն առնել պիտի տամ... Ով ուտում է իմ մարմինը և ըմպում՝ իմ արյունը, կբնակվի իմ մեջ» (Հովհ. 2 51, 53-54, 56): Հաղորդության խորհուրդը. ահա թե որն է միությունը Քրիստոսի հետ և, հետևապես, աղբյուրը հոգևոր կյանքի: Հաղորդության խորհուրդը մարդկանց միացնում է Աստծու հետ և այդպիսով միավորում նաև միմյանց հետ: Ահա թե ինչու է հաղորդությունը եկեղեցական կյանքի աղբյուր: Հաղորդության խորհրդի իմաստը նրա եկեղեցականության մեջ է: Եկեղեցական միությունից դուրս չկա նաև հաղորդություն: Բավականին հատկանշական է, որ սուրբ հայրերի գրվածքներում եկեղեցական միությունը անխախտ կապի մեջ է դիտվում Քրիստոսի Մարմնի և Արյան խորհրդի հետ: Արդեն սուրբ Իգնատիոս Աստվածազգյացը ֆիլադելֆիացիներին գրում է. «Ջանացեք մեկ պատարագ անել, քանզի մեկ է մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարմինը և մեկ նրա Արյան բաժակն ի միություն, մեկ՝ սեղանը» (գլուխ Դ): Նույն Սուրբ Իգնատիոսն ընդգծում է նաև հաղորդության եկեղեցական

4 - Իլարիոն արք.

լինելը. «Առանց եպիսկոպոսի ոչ ոք թող Եկեղեցուն վերաբերող որևէ բան չանի: Միայն այն պատարագը կարող է ճշմարիտ նկատվել, որը կատարվել է եպիսկոպոսի կամ նրա կողմից, ում նա ինքն է արտոնել: Որտեղ եպիսկոպոսն է, այնտեղ պետք է լինի նաև ժողովուրդը, այնպես ինչպես ուր Հիսուս Քրիստոս է, այնտեղ և Ընդհանրական Եկեղեցին» (Զմյուռնացիներին ուղղված նամակ, գլուխ Ը): Սուրբ Կիպրիանոս Կարթագենացին գրում է. «Միասին ժողովված, աղացած և հունցված սերմնահատիկները մեկ հաց են կազմում: Այնպես է Քրիստոս, Ով երկնավոր հացն է, մենք տեսնում ենք մեկ մարմին, որի մեջ կապված և միացած է մեր բազմությունը»¹⁰: Հաղորդության եկեղեցականության և դրա նշանակության մասին սուրբ հայրերի ուսմունքը հատկապես խորն ու մանրամասն բացահայտել է Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին, նրա խոսքերն էլ կվկայակոչենք. «Միածինը սահմանեց որոշ, նրան հատուկ իմաստություն մե և Հոր խորհրդով ընտրված մի կերպ, որպեսզի մենք ինքներս մեկտեղվենք և միախառնվենք Աստծու և միմյանց հետ միության մեջ, թեպետև մեկս մյուսից տարբերվելով և կազմելով առանձին անձ, հոգով ու մարմնով,

¹⁰ Письмо 63 к Цицилию, Творения, ч. 1, гл. XIII, с. 397.

- հենց այսպիսի միջոց՝ մեկ մարմնի՝ ականհայտություն, իր սեփականի մեջ օրհնելով իրեն հավատացողներին խորհրդավոր հաղորդության միջոցով նրանց մարմնակից է դարձնում ինչպես Նրան, այնպես և միմյանց: Ո՞վ իրականում կարող էր բաժանել և միմյանց հետ բնական միությունից բռնի կերպով անջատել նրանց, ովքեր մեկ սուրբ մարմնի միջոցով կապված են ի Քրիստոս միությունյամբ: Չէ որ եթե «բոլորս էլ այդ միակ հացից ենք վայելում», ապա բոլորս մեկ մարմին ենք կազմում (Ա Կորնթ. Ժ 17), քանզի Քրիստոս չի կարող բաժանվել: Դրա համար էլ Եկեղեցին կոչվում է Քրիստոսի մարմին, իսկ մենք, ըստ Պողոս առաքյալի ըմբռնման՝ առանձին անդամներ (Ա Կորնթ. ԺԲ 27): Մենք բոլորս, սուրբ մարմնի միջոցով միանալով մեկ Քրիստոսի հետ, իբրև Նրա՝ միակի և անբաժանելի ստացողներ մեր մարմիններում, պետք է համարենք, որ մեր անդամներն առավելաբար Նրան են պատկանում, քան մեզ»¹¹: «Քրիստոս մեր մեջ բնակվում է ոչ թե միայն հոգեվիճակով պայմանավորված տրամադրության արդյունքում, ինչպես Ինքն է ասում (Հովհ. Զ 56), այլև, անշուշտ, բնության հաղորդությամբ: Ինչպես եթե մեկը, մեկ մոմը միացնելով մյուսի հետ

¹¹ Толкование на Евангелие Иоанна, кн. 11, гл. 11, նույն տեղում Կ. 15, Ը. 109-110.

և հալելով կրակի վրա, երկուսից ինչ-որ մեկ բան է պատրաստում, այնպես և Քրիստոսի Մարմնին և Սուրբ Արյանը հաղորդության միջոցով Նա ինքն է մեր մեջ բնակվում, և մենք, մեր կողմից, Նրա մեջ միավորվում։ Չէ որ այլ կերպ հնարավոր չէր լինի, որ ապականացման ենթարկվածն ունակ լիներ կենդանացման, եթե մարմնապես չի զուգակցվել Նրա, այսինքն՝ Միածնի մարմնի հետ, Ով բնությամբ կյանք է»¹²։

Այսպիսով՝ Քրիստոսի հանձնարարությամբ և սուրբ հայրերի աստվածաբանության համաձայն, ճշմարիտ կյանքը հնարավոր է սոսկ Քրիստոսի հետ սերտ բնական կամ, ինչպես այժմ են ասում, իրական միությանբ, հաղորդության խորհրդով, սակայն Քրիստոսի հետ այդ միությունը ստեղծում է նաև միմյանց հետ մարդկանց միություն, այսինքն՝ ստեղծում է Եկեղեցու մեկ մարմին։ Հետևաբար, քրիստոնեական կյանքն իր էությունբ եկեղեցական է։

Կա ևս մեկ աղբյուր մարդկության նոր կյանքի, հենց եկեղեցական կյանքի՝ Սուրբ Հոգին։ Ինքը Քրիստոս ասում էր, որ եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծու արքայությունը մտնել (Հովհ. Գ 5). պետք է հոգուց ծնված լինել (Հովհ.

¹² Толкование на Евангелие Иоанна, кн. 10, гл. 2, նույն տեղում Сергиев Посад, 1900, ч. 14, с. 324.

Գ 6, 8): Եվ երբ Պողոս առաքյալը խոսում է Եկեղեցում մարդկանց միության մասին, նա միշտ Սուրբ Հոգու մասին է խոսում իբրև այդ միության աղբյուր¹³:

Եկեղեցին առաքյալի համար ոչ միայն «Մի մարմին» է, այլև «Մի Հոգի», և այստեղ նկատի ունի ոչ միայն համախոհությունը, այլև Աստծու մեկ Հոգին, որ ներթափանցում է Եկեղեցու ողջ մարմնի մեջ, ինչպես և վկայում են Եկեղեցու սուրբ հայրերն ու վարդապետները: «Ի՞նչ է նշանակում Հոգու միություն», – հարցնում է Սուրբ Հովհան Ոսկեբերանը և պատասխանում. «Ինչպես մարմնում ոգին ամենն ընդգրկում է և ինչ-որ միություն է հաղորդում մարմնի անդամների տարբերությունից բխող զանազանությանը, այնպես և այստեղ: Սակայն հոգին նաև տրված է, որպեսզի միավորի մարդկանց, որոնք ծագմամբ և մտածելակերպով նման չեն միմյանց»¹⁴: «Այդ բառերով («մի Հոգի») նա ցանկանում էր փոխադարձ համաձայնության մղել, կարծես ասելով, քանի որ մի Հոգի եք ստացել և ըմպել եք մի ակունքից, ապա

¹³ Տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 11, 13, Եփես. Դ. 3-4, 7 և այլն:

¹⁴ Толкование на Послание святого апостола Павла к Ефессянам, беседа 9, Творения. СПб.: Духовная Академия, т. 11, с. 86.

ձեր մեջ հակամարտություններ չպիտի լինեն»¹⁵։ Երանելի Թեոփորիտոսն ասում է. «Դուք բոլորդ արժանացաք մի շնորհի, մեկ աղբյուր է տարածում տարբեր հոսանքները, Մի Հոգի ընդունեցիք, մի մարմին եք կազմում»¹⁶։ Երանելի Հերոնիմոսն ասում է. «Մի մարմինը Քրիստոսի մարմնի իմաստով է, որն Եկեղեցին է, իսկ մի Սուրբ Հոգին հենց մի Բաշխողն ու բոլորին Սրբագործողն է»¹⁷։ Երանելի Թեոփիլակտոս Բուլղարացին ասում է. «Ինչպես մարմնի մեջ հոգին ամեն ինչ կապող և համախմբող սկիզբ է, թեպետ անդամները տարբեր են, այնպես և հավատացյալների մեջ կա Սուրբ Հոգին, Որը միավորում է ամենքին, թեպետ մենք տարբերվում ենք միմյանցից ծագումով և բարքերով, և զբաղումներով»¹⁸։

¹⁵ На Послание к Ефесеянам, беседа 11, նույն տեղում տ. 11, с. 96.

¹⁶ Творения, М., 1861, ч. 7, с. 434.

¹⁷ Творения, Киев: Изд. Киевской Духовной Академии, кн. 17, с. 297.

¹⁸ Толкование на Послание святого апостола Павла к Ефесеянам, Казань, 1867, с. 123. Ներկայացնենք նաև ուղղափառ աստվածաբան պրոֆ. Բոգդաշևսկու (հետագայում Վասիլիյ եպիսկոպոս) մեկնությունը. «Հոգու մեկ լինելը միություն է, որն իրագործում է Հոգին կամ ստեղծում այն. Եկեղեցում բնակվող այդ միությունը Աստծու Հոգուց է» (Послание святого апостола Павла к Ефесеянам, Киев, 1904, с. 503):

Հստ առաքյալի մտքի, ողջ եկեղեցական կյանքը հենց Աստծու Հոգու դրսևորում է, սիրո յուրաքանչյուր դրսևորում, ամեն առաքինություն Սուրբ Հոգու շնորհի գործողությունն է։ Ամեն ինչ միևնույն Հոգին է կատարում։ Մարդիկ, ըստ Պետրոս առաքյալի արտահայտության, պեսպես շնորհների բարի տնտես են (Ա Պետր. Դ 10)։ Եկեղեցու ամբողջ մարմինը ներթափանցող Աստծու Հոգին, որ այդ մարմնի բոլոր անդամներին տալիս է տարբեր հոգևոր շնորհներ, մարդկության համար հնարավոր է դարձնում նոր կյանքը։ Նա է, որ բոլորին միավորում է մեկ մարմնի մեջ և միաբանում նրանով, որ սրտի մեջ սեր է հեղում, որը մարդու բնական վիճակում չի կարող նրա կյանքի և այլ մարդկանց հանդեպ իր հարաբերությունների հիմքը լինել։

«Սերն Աստծուց է» (Ա Հովհ. Դ 7)՝ Հովհաննես առաքյալի հետևյալ արտահայտությունը կարելի է մի շարք առաքելական դատողությունների ընդհանուր նյութ համարել։ Սերը կոչվում է աստվածային (Ա Հովհ. Բ 5, Գ 17, Դ 9, Հռոմ. Ե 6,)¹⁹։ Քրիստոսի սերն ընդգրկում է եկեղեցու անդամներին (Բ Կորնթ. Ե 14)։ Տերն ուղղում է բոլորի սրտերը դեպի Աստծու սերը (Բ Թես. Գ 5)։

¹⁹ Հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 15, Բ Թես. Գ 5:

Աստծու սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով (Հռոմ. Ե 5): Սերը Հոգու պտուղն է (Գաղ. Ե 22): Աստված փրկեց մեզ նորոգության մեջ Սուրբ Հոգու, թափեց մեր վրա առատության մեջ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով (Տիտ. Գ 5-6): Քրիստոնյաներին առաջնորդում է Աստծու Հոգին (Հռոմ. Ը 14):

Այսպիսով՝ Եկեղեցում բնակվող Սուրբ Հոգին Եկեղեցու յուրաքանչյուր անդամին ուժ է տալիս նոր արարած լինելու, կյանքում սիրով առաջնորդվելու: Եկեղեցու մասին Պողոս առաքյալի վարդապետության անքակտելիորեն կապված է սիրո՝ իբրև քրիստոնեական կյանքի սկզբի, վարդապետության հետ: Այդ կապը գրեթե չի նկատվում ժամանակակից գիտնական մեկնիչների կողմից, սակայն այն մատնանշում են Եկեղեցու սուրբ հայրերը: Այդպես՝ Երանելի Թեոդորիտոսը մարմնի հետ Եկեղեցու առաքելական համեմատության մասին ասում է. «Այս գործածությունը պատշաճում է սիրո մասին վարդապետությանը»²⁰: Իսկ Սուրբ Հովհան Ոսկեբերանը, մեկնելով «մի մարմին» արտահայտությունը, ասում է. «Պողոսը մեզանից այնպիսի սեր է պահանջում, որ կկապեր մեզ միմյանց հետ՝ դարձնելով միմ-

²⁰ Творения, ч. 7, с. 134.

յանցից անբաժանելի,- և այնպիսի կատարյալ միություն, իբրև թե մի մարմնի անդամներ ենք, քանզի այդպիսի սերն է մեծ բարիք գործում»²¹։ Ընթերցելով Պողոս առաքյալի նամակները՝ կարելի է նկատել, որ Եկեղեցու և սիրո մասին նա սովորաբար միաժամանակ է խոսում, և դա, իհարկե, որովհետև առաքյալի ուսմունքի համաձայն, Եկեղեցին և սերը փոխկապակցված են։ Քրիստոնեական ողջ առաքինությունն առաքյալի մոտ հաստատված է Եկեղեցու ճշմարտության վրա։ Այդպես, հոռեացիներին ուղղված նամակի վերջին գլուխներում առաքյալը մանրամասն խոսում է քրիստոնեական բարոյականության մասին։ Այդ ճառը սկսվում է ԺԲ գլխի 9-րդ համարից, իսկ նախորդող համարներում (4-8) առաքյալը համառոտ շարադրել է իբրև մարմին Եկեղեցու մասին վարդապետությունը։ Կորնթացիներին ուղղված առաջին նամակի ԺԲ գլխում շարադրված Եկեղեցու մասին վարդապետությանն անմիջապես հետևում է «սիրո նորկտակարանյան օրհներգը» (ԺԲ 31-ԺԳ 13)։ Նման մի բան կարելի է նկատել նաև Եփեսացիներին և Կոլոսացիներին ուղղված նամակներում։

²¹ Толкование на Послание святого апостола Павла к Ефесянам, беседа 2, 1, Творения, т. 11, с. 96.

Ի՞նչ կարելի է հետևեցնել ասվածից: Քրիստոսի գործը միայն վարդապետությունը չէ, այլ մարդկային ցեղի մեջ միություն հաստատումը: Քրիստոսի առաքելությունը «նոր արարածի», այսինքն՝ Եկեղեցու ստեղծումն է: Եկեղեցում բնակվող Սուրբ Հոգին ուժ է տալիս կյանքի կոչելու քրիստոնեական վարդապետությունը, իսկ քանի որ այդ վարդապետությունը սիրո վարդապետությունն է, ապա դրա իրագործումը կրկին միություն է ստեղծում, քանզի սերը միավորող և ոչ թե բաժանող սկզբունք է: Եկեղեցու աճը միևնույն ժամանակ իր առանձին անդամների աճն է:

Նորկտակարանյան գրվածքներում Եկեղեցու գոյության նպատակն է նաև մարդու հոգևոր կատարելագործումը: Պողոս առաքյալի մտքի համաձայն, Եկեղեցում հոգևոր շնորհներն ու ընդհանրապես ծառայությունները գոյություն ունեն «հաստատելու համար սրբերին՝ իրենց պաշտոնի կատարման մեջ», այսինքն՝ քրիստոնյաների հոգևոր վերածննդյան համար (Եփես. Դ 12), «մինչև որ մենք բոլորս հասնենք հավատի կատարյալ միությանն ու Աստծու Որդու ճանաչմանը, կատարյալ մարդու աստիճանին՝ ունենալով ճիշտ Քրիստոսի հասակի չափը» (Եփես. Դ 13): Իսկ այնուհետև առաքյալը պատկերում է նաև այն ճանապարհը, որով վերածնված մարդկություն-

նը հասնում է «Քրիստոսի հասակի չափին»։ Սակայն, ցավոք, այն հատվածը, ուր խոսվում է այդ ճանապարհի մասին գրեթե ամենախրթինն է Նոր Կտակարանի սլավոնական տեքստում։ Փոքր-ինչ հասկանալի է թարգմանության մեջ. «Նրանից է կախված ամբողջ մարմինը, իրար ամրորեն միացած զանազան հոդերով, այնպես որ, երբ մարմնի յուրաքանչյուր մաս գործում է ինչպես որ պետք է, ամբողջ մարմինը աճում է և կառուցվում սիրո մեջ» (Եփես. Դ 16)։ Սակայն նախընտրությունը պետք է տալ սլավոններենին, որովհետև բնագրի ողջ իմաստը պահպանված է սլավոններեն թարգմանության մեջ, իսկ հատվածի ուսերեն թարգմանությունը բնագրի ողջ իմաստը չի հաղորդում։ Չանցնելով հունարեն բնագրի մանրամասն քննության²²՝ ասենք միայն, թե առաքյալն ինչ միտք է արտահայտել²³։ Եկեղեցու ողջ մարմինն անընդհատ ավելի և ավելի է համախմբվում Սուրբ Հոգու բարեբեր շնորհների ընկալման միջոցով,

²² Այս հատվածի նման մեկնությունը պրոֆ. Բոգդաշևսկու մոտ է (указ. соч., с. 557-565), նաև տե՛ս **Мансветов Ив.**, Новозаветное учение о Церкви, М., 1879, с. 143 - 160.

²³ «Նա (առաքյալը) բավականին անհստակ է շարադրել իր մտքերը, որովհետև ցանկացել է ամեն բան միանգամից արտահայտել», - ասում է սուրբ Հովհան Ոսկեբերանը։ St'ya Толкование на Послание святого апостола Павла к Ефесянам, беседа 2, 3, Творения, т. 11, с. 100 - 101.

որոնք յուրաքանչյուրի մեջ հատուկ կերպով են գործում, և այդպիսով Եկեղեցին կատարելության է հասնում իր բոլոր անդամներով: Եկեղեցական մարմնի աճը պայմանավորվում է ընդհանուր սիրո հաղորդությամբ, քանզի միայն սիրո առկայության, Եկեղեցու հետ միության պարագային է հնարավոր Հոգու շնորհների ընկալումը: Սուրբ առաքյալի վերոբերյալ խոսքն այսպես են հասկանում Սուրբ Հովհան Ոսկեբերանը²⁴, Երանելի Թեոդորիտոսը²⁵, Հովհան Դամասկացին²⁶ և երանելի Թեոփիլակտոսը²⁷: Նրանց գաղափարները համախմբել է Թեոփանես Ճգնավորը, ում խոսքերն այժմ կվկայակոչենք. «Քրիստոնեական հավատը հավատավորներին կապում է Քրիստոսի հետ և այդպիսով բոլորից կազմվում մի վայելուչ մարմին: Քրիստոս արարում է այս մարմինը՝ յուրաքանչյուրին հաղորդելով Իրեն հետ և շնորհի Հոգի տալով գործնականապես, շոշափելի կերպով, այնպես որ այս շնորհի Հոգին, իջնելով յուրաքանչյուրի վրա, դարձնում է նրան այն, ինչ նա պետք է լինի Քրիստոսի Եկեղեցու մարմնի մեջ:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

²⁶ In epist ad Ephesios. Migne, PG, t. 95, col. 844A.

²⁷ Толкование на Послание святого апостола Павла к Ефессянам, Казань, 1881, с. 132.

Քրիստոսի մարմինը, վայելուչ կերպով զուգակց-վելով Հոգու տրման հետ, այնուհետև աճում է այն չափով, որքանով՝ ամեն անդամ իր կոշման մեջ և գործում է ի բարօրություն Եկեղեցու՝ ստացված շնորհի ողջ լրությանմբ»²⁸։

Պողոս առաքյալի բերված ուսմունքից և սուրբ հայրերի մեկնություններից երևում է, որ նորկտակարանյան վարդապետության համա-ձայն մարդկային անձի կատարելագործումը պայմանավորված է նրա պատկանելությամբ Եկեղեցուն՝ Սուրբ Հոգու բարեբեր ներգործությամբ կենդանի, աճող օրգանիզմին։ Եթե կապը Եկեղեցու մարմնի հետ կտրվի, ապա առանձին անհատը, մեկուսանալով և ամփոփվելով իր անձնասիրության մեջ, կզրկվի Եկեղեցում բնակ-վող Սուրբ Հոգու շնորհաբեր ներգործությունից։ «Իսկապես, եթե պատահի, որ ձեռքն անջատվի մարմնից, գլխուղեղից բխող հոգին, շարունա-կությունը փնտրելով և չգտնելով այն այնտեղ, չի անջատվում մարմնից և անցնում հատված ձեռ-քին, իսկ եթե չի գտնում այն, ապա չի փոխանց-վում նրան։ Նույնն էլ այստեղ է լինում, եթե մենք միմյանց կապված չենք սիրով։ Ուստի, եթե ցան-կանում ենք Գլխից Հոգի ստանալ, միմյանց հետ

²⁸ Толкование Послания святого апостола Павла к Ефесе-
нам, 2-е изд. М., 1883, с. 307.

միության մեջ լինենք: Կա Եկեղեցուց անշատման երկու տեսակ. մեկը, երբ մեր մեջ պաղուժ է սերը, իսկ երկրորդը, երբ համարձակվում ենք որևէ անպատշաճ բան անել Եկեղեցու հանդեպ: Երկու դեպքում էլ մենք անշատվում ենք ամբողջությունից»²⁹: Պարզ է, որ Սուրբ Հովհան Ոսկեբերանն Եկեղեցուց ամեն զատում համարում է զրկում Սուրբ Հոգու շնորհից: «Այն, ինչ նոր է անշատվել կյանքի սկզբնաղբյուրից, չի կարող փրկարար էություն կորստյան հետ մեկտեղ ապրել և շնչել հատուկ կյանքով»³⁰: «Առանձնացրու արևի ճառագայթն իր սկզբնաղբյուրից. միությունը թույլ չի տա առանձին լույսի գոյատևումը: Ծառից մի ճյուղ կտարի՞ր, կտարվածը կկորցնի աճելու կարողությունը: Բաժանիր առվակն իր աղբյուրից, անշատվածը կցամաքի: Նույն կերպ Տիրոջ լույսով լուսավորված Եկեղեցին ողջ աշխարհով սփռում է իր ճառագայթները, սակայն ամենը ողողող լույսը մեկ է, և մարմնի միությունը մնում է անբաժանելի: Ողջ աշխարհով նա տարածում է պտուղներից ծանրացած իր ճյուղերը, նրա առատ հոսանքները հոսում են հեռավոր տա-

²⁹ **Святой Иоанн Златоуст**, Толкование на Послание к Ефесянам, беседа 2, 3, Творения, т. 11, с. 100.

³⁰ **Святой Киприан Карфагенский**, О единстве Церкви, гл. 5; նույն տեղում շ. 2, с. 180.

րաժուլթյան մեջ, սակայն այդ ամենով հանդերձ գլուխը մնում է մեկը, մեկ սկիզբ, մեկ մայր՝ հարուստ բարեբերության բարգավաճմամբ»³¹։ Այս ոգեշունչ և նուրբ-պոետիկ խոսքերում պարզ արտահայտվում է այն միտքը, որ առանձին անհատ, անգամ առանձին քրիստոնեական համայնք, այնքանով է կենդանի, որքանով նա ապրում է Քրիստոսի կյանքով, որքանով նա միացած է ողջ Տիեզերական Եկեղեցու հետ։ Մեկուսանալ, ամփոփվել... անձի և անգամ տեղական Եկեղեցու համար դա նույնն է, ինչ ճառագայթի համար անջատվել արևից, առվակին՝ աղբյուրից, ճյուղին՝ բնից։ Հոգևոր կյանքը կարող է լինել միայն Տիեզերական Եկեղեցու հետ օրգանական կապի դեպքում. եթե կտրվի այդ կապը, անպայման կցամաքի նաև քրիստոնեական կյանքը։

Հուսանք, որ բավարար չափով ցույց տրվեց, թե Եկեղեցու գաղափարը նորկտակարանյան վարդապետության մեջ խիստ էական նշանակություն ունի։ Քրիստոնեությունն ի նկատի ունի ոչ միայն գիտակցության շահերը, այն ուսուցանում է նաև մարդու փրկության մասին։ Դրա համար քրիստոնեության մեջ չկան սոսկ տեսական դրույթներ։ Դավանաբանական ճշմարտություններն ունեն բարոյական նշանակություն, իսկ

³¹ Նույն տեղում։

քրիստոնեական բարոյականությունը հիմնված է հրամանակարգերի վրա: Բայց հենց Եկեղեցին է այն կետը, ուր հավատի դավանանքը փոխվում է բարոյախոսության, քրիստոնեական դավանաբանությունը դառնում է քրիստոնեական կյանք: Եկեղեցին քրիստոնեական վարդապետությանը կյանք է տալիս և իրագործում: Եկեղեցուց դուրս և առանց Եկեղեցու քրիստոնեական կյանքն անհնար է: Միայն Եկեղեցում մարդ կարող է ապրել, զարգանալ և փրկվել, ինչպեսև որևէ օրգանիզմում առանձին անդամներ երբեք չեն աճում և զարգանում միմյանցից անկախ, այլ մշտապես անքակտելի կապի մեջ են ողջ օրգանիզմի հետ: Առանց Եկեղեցու քրիստոնեություն չկա, մնում է միայն քրիստոնեական վարդապետությունը, որն ինքնին չի կարող «նորոգել անկյալ Ադամին»:

Այժմ եթե Եկեղեցու մասին նորկտակարանյան վարդապետության բացատրությունից հետո դառնանք քրիստոնեության վաղ շրջանի պատմության, ապա կտեսնենք, որ հենց Եկեղեցու գաղափարն էր քրիստոնեական աշխարհայացքի հիմնական գաղափարը, և հենց դա է ստեղծում իրականությունը: Քրիստոնյաները նախ և առաջ գիտակցեցին իրենց իբրև Եկեղեցի, և քրիստոնեական հասարակությունը բոլոր այլ անվանումներից նախընտրեց իրեն կոչել Եկեղեցի: «Եկեղե-

ցի» բառն իսկ Նոր Կտակարանում հանդիպում է 110 անգամ: Իսկ «քրիստոնեություն» բառը, ինչպես և այլ բառեր «-թյուն» վերջածանցով, Նոր Կտակարանում չկան: Քրիստոսի աշակերտների և առաքյալների վրա Սուրբ Հոգու էջքից հետո Եկեղեցին, իբրև տեսանելի հասարակություն, իր անդամների հոգևոր փոխհարաբերություններով հանդերձ, դարձավ իրողություն: Չէ՞ որ սկզբից չկար ուսմունքի որևէ մասնավոր համակարգ: Քրիստոսի հավատը ամփոփվում էր շատ ընդհանուր մի քանի դրույթներում: Քրիստոնեության մեջ սովորելու որևէ բան չկար: Ինչ-որ տեսական դրույթների հետ համաձայնել-չհամաձայնելու հարց չկար: Ի՞նչ էր նշանակում այդ ժամանակ քրիստոնյա լինելը: Մեր օրերում այդ հարցին կարելի է շատ տարբեր պատասխաններ լսել, օրինակ՝ այսպիսիք. քրիստոնյա լինել՝ նշանակում է ընդունել Քրիստոսի վարդապետությունը, ջանալ կատարել Նրա պատվիրանները: Սա, անշուշտ, լավագույն պատասխանն է: Սակայն վաղ քրիստոնեությունն այս հարցին բացարձակ այլ կերպ էր պատասխանում: Իր պատմության առաջին իսկ էջերից քրիստոնեությունը մեր առջև հայտնվում է իբրև համախոհ և միահոգի համայնք: Այդ համայնքից դուրս քրիստոնյաներ չկային: Քրիստոսին հավատալ, քրիստոնյա դառնալ՝ նշանա-

կում էր միանալ Եկեղեցուն, ինչպես դա բազմիցս
և արտահայտվել է «Գործք առաքելոց» գրքում,
ուր ընթերցում ենք. «Տերն օրեցօր փրկվածներին
նրանց թվի վրա ավելացնում էր» (Բ 47, Ե 13-14):
Ամեն նոր հավատացյալ կարծես ճշուղ լիներ, որ
պատվաստվում էր եկեղեցական կյանքի միակ
ծառին: Ահա Եկեղեցուն միանալու ամենաբ-
նորոշ օրինակը, որը հենց այդպիսի միացման
պատկերն է: Տիրոջ աշակերտներին սպառնա-
լու և սպանելու կրքով լցված հալածիչ Սողոսը
Դամասկոսի ճանապարհին հրաշքով դառնում է
Քրիստոսի հետևորդ: Աստծու մարդուն հատուկ
հայտնություն պարագա է մեր առջև: Սակայն
Դամասկոսում Տերը Սողոսի մոտ է ուղարկում
Անանիային, որը և մկրտում է նրան, որից հետո
Սողոսը մի քանի օր աշակերտների հետ Դամաս-
կոսում էր: Այնուհետև ժամանելով Երուսաղեմ՝
Սողոսը ջանում է միանալ աշակերտներին և, երբ
Բառնաբասը նրա մասին հայտնում է աշակերտ-
ներին, նրանց հետ է մնում: Այսպիսով՝ անգամ
ապագա մեծ առաքյալը, ում Տերն ընտրյալ անոթ
է կոչում Անանիային եղած տեսիլքի մեջ (Գործք
Թ 15), անմիջապես իր դարձից հետո միանում
է Եկեղեցուն, իբրև տեսանելի հասարակույթ-
յան: Այստեղ առանձնահատուկ պատկերավոր

կերպով ցույց է տրվում, որ Տերը չի ցանկանում իր ծառաներին ճանաչել Եկեղեցուց դուրս ³²:

Հասկանալի է, թե ինչու է Սուրբ Պողոս առաքյալն այդքան համառորեն իր նամակներում խոսում Եկեղեցու մասին, նա Եկեղեցու մասին վարդապետությունն չի ստեղծում: Նա դեռ իր դարձի ժամանակ առնչվել էր Եկեղեցու հետ: Անգամ իր դարձից առաջ էլ Սողոսը գիտեր հենց Եկեղեցին և ոչ այլ ինչ: Հետագայում ինքն է հիշում. «Դուք լսած կլինեք հրեություն մեջ եղած ժամանակ երբեմնի իմ ընթացքի մասին, թե ինչքա՛ն էի հալածում Աստծու եկեղեցին և քանդում էի այն» (Գաղ. Ա 13): Սողոսը ինչ-որ ուսմունքի հետևորդների չէր հալածում, այլ՝ Եկեղեցուն, որը անգամ «արտաքինների» կողմից իբրև մեկ միավոր էր ընկալվում: Գործքում ընթերցում ենք. «Եվ հավատացյալների բազմությունը մեկ սիրտ ու մեկ հոգի էր» (Դ 32): Եվ բավականին հատկանշական է, որ Դ դարում Սուրբ Երրորդության մասին վարդապետությունն ավելի պարզաբանելիս, որոշ սուրբ հայրեր իբրև օրինակ մատնանշում էին հենց վաղբրիստոնեական Եկեղեցին, ուր բազմությունը միություն էր:

Իսկ թե որքան խիստ էր որոշակիացված վաղբրիստոնեական համայնքը, այդ մասին սքանչելի

³² Հմմտ. Митрополит Антоний. Собр. соч., т. 2; с. 16.

խոստում է Գործքի մի համարը, որը կարծես չեն նկատում. «Ուրիշներից ոչ ոք չէր համարձակվում մոտենալ նրանց» (Ե 13):

Այսպիսով՝ մի կողմից դարձը դեպի քրիստոնեություն ընկալվում է որպես միացում Եկեղեցուն, իսկ, մյուս կողմից՝ «Ուրիշներից ոչ ոք չէր համարձակվում մոտենալ նրանց»: Արդյոք պարզ չէ՞, որ առաջին շրջանում, երբ ողջ էին Տիրոջ անմիջական աշակերտները, քրիստոնեությունը հենց տեսանելի հասարակություն՝ Եկեղեցի էր, այն միայն ուսմունք չէր, այլ հենց կյանքն էր: Ըստ իր էության եկեղեցական քրիստոնեությունը նաև իրականում մշտապես Եկեղեցի է եղել, այսինքն՝ տեսանելի հասարակություն, որն ունի իր որոշակի կազմակերպվածությունը: Եկեղեցու նվիրապետական կարգը ստեղծվել է դեռևս սուրբ առաքյալների կողմից³³: Բողոքական գիտությունը շատ է վիճում ընդդեմ այս եկեղեցական ճշմարտության, սակայն նվիրապետության առաքելական ծագման վիճարկման համար բողոքականները ստիպված են մերժել Պողոս առաքյալի հովվական նամակների իսկությունը,

³³ Այս ճշմարտության մանրամասն ապացույցի համար տե՛ս **Мышцын В. Н.**, Устройство христианской Церкви в первые два века, Сергиев Посад, 1909, с. 144-155, 229 և այլն:

այսինքն՝ գցել Սուրբ Գրքի հեղինակությունը և այդպիսով կտրել այն ճյուղը, որի վրա հաստատված է հենց ինքը՝ բողոքականությունը: Բավական է ընթերցել «Գործք առաքելոց» գիրքը և Տիմոթեոսին և Տիտոսին ուղղված Պողոս առաքյալի նամակները՝ համոզվելու համար առաքյալների կողմից եկեղեցում նվիրապետության հաստատման մեջ: Պողոսն ու Բառնաբասն եկեղեցիները հիմնելիս ամեն եկեղեցում երեցներ էին ձեռնադրում (Գործք ԺԴ 23): Պողոս առաքյալը Տիտոսին պատվիրում է բոլոր քաղաքներում երեցներ կարգել (Տիտ. Ա 5): Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց՝ հովվելու Տիրոջ և Աստծու եկեղեցին, որին Նա փրկեց Իր արյունով (Գործք Ի 28): Ահա թե ինչու դեռևս Ա դարում (մոտ. 97 թ.) Հռոմի Կղեմես եպիսկոպոսը կորնթացիներին ուղղված հատուկ թղթում նվիրապետությանը ենթարկվելու անհրաժեշտությունն ապացուցում է նրանով, որ նվիրապետությունը եկեղեցում հաստատվել է առաքյալների կողմից: Կղեմեսը գրում է. «Առաքյալներն ավետում էին մեզ Տեր Հիսուս Քրիստոսի անունից, Հիսուս Քրիստոս ուղարկվել էր Աստծուց: Հետևաբար, Քրիստոս Աստծուց է, իսկ առաքյալները՝ Քրիստոսից. և՛ մեկը, և՛ մյուսը Աստծու կամքով էր: Ընդունելով թելադրությունը՝ առաքյալները, կատարելապես համոզված

մեր Տեր Հիսուս Քրիստոսի հարությամբ և հավատի մեջ հաստատուն Աստծու խոսքով, Սուրբ Հոգու լրմամբ դուրս եկան՝ ավետելով գալիք Աստծու Արքայությունը: Քարոզելով քաղաքներում և գյուղերում՝ դրանց առաջնեկներին փորձելով հոգով կարգում էին եպիսկոպոսներ և սարկավագներ ապագա հավատացյալների համար» (գլուխ 42): «Մեր առաքյալները Տիրոջ միջոցով գիտեին, որ վեճ է լինելու եպիսկոպոսական արժանավորության մասին: Այդ իսկ պատճառով նրանք, կանխապես քաջ գիտենալով, կարգեցին վերոհիշյալներին և օրենք տվեցին, որպեսզի, երբ նրանք ննջեն, այլ փորձառու այրեր ստանձնեն նրանց ծառայությունը» (գլուխ 44): Ընդամենը երկու տասնամյակ անց, Հռոմ շարչարանքների ուղևորվելիս սուրբ Իգնատիոս Աստվածազգացը նամակներ է գրում տարբեր Եկեղեցիներին և ամենուրեք համոզում ենթարկվել նվիրապետությանը: «Ոչինչ մի արեք առանց եպիսկոպոսի և երեցների: Մի՛ կարծեք, որ ինչ-որ գովելի բան կստացվի, եթե դա ինքնագլուխ անեք», - գրում է սուրբ Իգնատիոսը մագնեզիացիներին (գլուխ է 1): «Առանց եպիսկոպոսի գիտության որևէ բան անողը ծառայում է սատանային», - գրում է զմյուռնացիներին (գլուխ Թ՝ 1): «Ով իրեն եպիսկոպոսից ավելի հարգի, նա բացարձակ կորած է»,

- գրում է սուրբ Իգնատիոսն իր աշակերտ Զմյուռնիայի եպիսկոպոս Պոլիկարպոսին: Առանց նվիրապետության, ըստ սուրբ Իգնատիոսի ուսմունքի, չկա Եկեղեցի (Նամակ թրալացիներին, գլուխ Գ 1): «Ովքեր Աստծուն են և Հիսուս Քրիստոսինը, նրանք եպիսկոպոսի հետ են», - կարդում ենք Ֆիլադելֆիացիներին ուղղված նամակում (գլուխ Գ 2): Պարզ երևում է, թե ինչպես է Եկեղեցին ի սկզբանե նվիրապետական առումով ինքն իրեն կանոնակարգված համարել և նվիրապետությունը դիտարկել է իբրև իր կառավարման աստվածադիր մարմին: Այդ մարմնի գործունեությունն արտահայտվել է շնորհաբեր խորհրդակատարությունների, հավատի վարդապետության, եկեղեցական կարգապահության մեջ: Տարբեր դարերում եկեղեցական կյանքը տարբեր է եղել: Փոփոխվել է նաև նվիրապետության գործունեությունը, սակայն Եկեղեցու նվիրապետական կառուցվածքի սկզբունքը մշտապես մնացել է նույնն ու անփոփոխ: Ի վերջո, կարծում եմ, որ մենք մեծ բացթողում կատարած կլինեինք, եթե վաղբրիստոնեական եկեղեցական հեղինակների մի քանի դատողություններ չվկայակոչեինք մեզ հետաքրքրող հարցի մասին, թե հնարավոր է արդյոք քրիստոնեությունն առանց Եկեղեցու: Կանգ առնենք Եկեղեցու վարդապետության պարզաբանման

հարցում շատ չարչարված միայն երկու հեղինակների հայացքների վրա՝ Սուրբ Կիպրիանոս Կարթագենացու և Երանելի Օգոստինոսի:

Ս. Կիպրիանոսի մտածումով՝ քրիստոնյա լինել նշանակում է պատկանել տեսանելի Եկեղեցուն և հնազանդվել նրանում Աստծու կողմից հաստատված նվիրապետությանը: Եկեղեցին Քրիստոսի սիրո իրագործումն է, և Եկեղեցուց ամեն անջատում ուղղակի սիրո խախտում է: Սիրո դեմ մեղանշում են հավասարապես և՛ հերետիկոսները, և՛ հերձվածողները: Սա է հենց Կիպրիանոսի «Եկեղեցու միասնության մասին» աշխատության հիմնական գաղափարը, նույն գաղափարն անընդհատ կրկնվում է նաև սուրբ հոր նամակներում: «Քրիստոս մեզ խաղաղություն է շնորհել: Կարգադրել է, որ լինենք հաշտ և միասիրտ, պատվիրել է անխախտ և ամուր պահպանել կապվածության և սիրո միությունը: Քրիստոսին չի պատկանելու նա, ով հավատուրաց անհաշտությամբ խախտել է Քրիստոսի սերը. սեր չունեցողն Աստված էլ չունի: Աստծու Եկեղեցու մեջ համախոհ լինել չցանկացողները չեն կարող Աստծու հետ լինել»³⁴:

³⁴ О единстве Церкви, гл. 14, Творения, ч. 2, с. 188, 189.

Հերետիկոսների ու հերձվածողների մոտ չկա սեր, այսինքն՝ հիմնական քրիստոնեական առաքինությունը, դրա համար էլ նրանք միայն անունով են քրիստոնյա: «Հերետիկոսը կամ հերձվածողը չի պահպանում ոչ Եկեղեցու միությունը, ոչ էլ եղբայրական սերը»³⁵, Քրիստոսի սիրուն հակառակ է գործում»³⁶: «Մարկիանոսը, միանալով Նովատիանոսին, դարձավ բարեգթության և սիրո թշնամի»³⁷: Հերետիկոսների մասին հայտնի է, որ հեռացան Ընդհանրական Եկեղեցու սիրուց և միությունից³⁸: «Ինչ միություն է պահում, ինչ սեր է փայփայում կամ ինչ սիրո մասին է խորհում նա, ով, տրվելով պառակտման մղումներին, բաժանում է Եկեղեցին, քայքայում հավատը, խաթարում խաղաղությունը, արմատախիլ անում սերը, սրբապղծում խորհուրդը»³⁹:

Սուրբ Կիպրիանոսը հետևյալ միտքն է արտահայտում, որ Եկեղեցուց դուրս չի կարող լինել ոչ միայն քրիստոնեական կյանք, այլև քրիստոնեա-

³⁵ Письмо 43 к Антониану, նույն տեղում Վ. 1, Տ. 236; Письмо 59 к Стефану, նույն տեղում Վ. 1, Տ. 330.

³⁶ Письмо 62 к Магну, նույն տեղում Վ. 1, Տ. 360.

³⁷ Письмо 53 к Стефану, նույն տեղում Վ. 1, Տ. 312.

³⁸ Письмо 62 к Магну, նույն տեղում Վ. 1, Տ. 361.

³⁹ О единстве Церкви, гл. 15, նույն տեղում Վ. 2, Տ. 190. Տե՛ս նաև «О Молитве Господней», гл. 24, Վ. 2, Տ. 217-218; Письмо 43 к Антониану, Творения, Վ. 1, Տ. 239.

կան վարդապետություն: Միայն Եկեղեցում է մաքուր հավատը⁴⁰: Կիպրիանոսը Եկեղեցին կոչում է Ճշմարտություն⁴¹: Հավատի միությունը չի կարելի տարանջատել Եկեղեցու միությունից⁴²: Ճշմարտությունը մեկն է, ինչպես և մեկն է Եկեղեցին⁴³: Նրան, ով հակված չէ Եկեղեցու միության, չի կարելի համարել, որ պահպանում է հավատը⁴⁴:

Եկեղեցուց ամեն մի անջատում անտարակույս կապված է նաև հավատի խեղաթյուրման հետ: «Թշնամին է հորինել հերետիկոսություններն ու հերձվածները, որպեսզի հավատը կործանի, խեղաթյուրի ճշմարտությունը, խաթարի միությունը: Նրա սպասավորները հավատի անվան ներքո հավատուրացություն են ավետում, հակաքրիստոսին՝ Քրիստոսի անվան ներքո, և կեղծիքը ճշմարտանմանությամբ, նուրբ խորամանկությամբ քողարկելով՝ ոչնչացնում են ճշմարտությունը»⁴⁵: «Ինչպես սատանան Քրիստոս չէ, թեպետև խաբում է Նրա անվամբ, այնպես և քրիստոնյա

⁴⁰ Письмо 62 к Магну, նույն տեղում Վ. 1, Ս. 371.

⁴¹ Письмо 58 к Квинту, նույն տեղում Վ. 1, Ս. 326 - 327.

⁴² 61 к Помпею, նույն տեղում Վ. 1, Ս. 353; Письмо 57 к Януарию, նույն տեղում Վ. 1, Ս. 326.

⁴³ Письмо 56 к Квинту, նույն տեղում Վ. 1, Ս. 326; О единстве Церкви, գլ. 23, նույն տեղում Վ. 2, Ս. 197.

⁴⁴ О единстве Церкви, գլ. 3, նույն տեղում Վ. 2, Ս. 179 - 180.

⁴⁵ Նույն տեղում Ս. 178.

չի կարող համարվել նա, ով նրա Ավետարանի և հավատի ճշմարտության մեջ չէ»⁴⁶: «Հերետիկոսը բաժանում է Եկեղեցին»⁴⁷, Եկեղեցու դեմ զինվում, հավատի հարցում դավաճան է, արժանապատվության հարցում՝ սրբապիղծ, անհնազանդ ծառա, անօրեն որդի, անբարյացակամ եղբայր»⁴⁸: «Եթե քննենք նրանց հավատը, ովքեր Եկեղեցուց դուրս են հավատում, ապա կպարզվի, որ բոլոր հերետիկոսների մոտ բացարձակ այլ հավատ է, նույնիսկ նրանց մոտ միայն սրբության և ճշմարտության դեմ մարտնչող մոլագարություն, աստվածանարգություն և նեխում է»⁴⁹: Ս. Կիպրիանոսի համոզմամբ, անհնարին է Եկեղեցուց դուրս լինել և քրիստոնյա մնալ: Եկեղեցուց դուրս լինել՝ նշանակում է Քրիստոսի ճամբարից դուրս լինել⁵⁰: Եկեղեցին ուրացողները և Եկեղեցու դեմ գործողները հակաքրիստոս և հեթանոսներ են⁵¹:

⁴⁶ О единстве Церкви, гл. 14, նույն տեղում Վ. 2, Ս. 189.

⁴⁷ Նույն տեղում, Ս. 190. Հմմտ. Письмо 60 к Юбаяну, նույն տեղում Վ. 1, Ս. 334.

⁴⁸ О единстве Церкви, гл. 17, նույն տեղում Վ. 2, Ս. 191-192

⁴⁹ Письмо 60 к Юбаяну, նույն տեղում Վ. 1, Ս. 334-335.

⁵⁰ Письмо 40 к Корнелию, նույն տեղում Վ. 1, Ս. 205.

⁵¹ Письмо 62 к Магну, նույն տեղում Վ. 1, Ս. 360-361. Կիպրիանոսն այստեղ հղում է կատարում Ղուկ. ԺԱ 23, Մատթ. ԺԸ 17, Հովհ. Բ 18: Ин. 2: Ст'я Письмо 57 к Януарию, նույն տեղում Վ. 1, Ս. 324-325, Письмо 61 к Помпею, նույն տեղում Վ. 1, Ս. 351.

Ահա օրինակ՝ ինչ է գրում Ս. Կիպրիանոսն Անտոնիանոսին Նովատիանոսի մասին: «Սիրեցյալ եղբայր, դու ցանկանում էիր, որ ես գրեմ քեզ Նովատիանոսի վերաբերյալ, թե ինչ հերետիկոսություն է առաջ բերել: Իմացի՛ր, որ նախ և առաջ մենք չպետք է հետաքրքրվենք, թե ինչ է նա ուսուցանում, երբ ուսուցանում է Եկեղեցուց դուրս: Ով և ինչպիսին էլ որ նա լինի, նա քրիստոնյա չէ, եթե փութապես Քրիստոսի Եկեղեցում չէ»⁵²: «Ինչպես կարող է Քրիստոսի հետ լինել նա, ով Քրիստոսի Հարսի հետ չէ, չի գտնվում Նրա Եկեղեցում»⁵³: Վերջապես «Եկեղեցու միասնությունն առում է մենք կարգում ենք նրա նշանավոր խոսքերը. «Ով Եկեղեցին իբրև մայր չունի, Աստծուն իբրև հայր արդեն ունենալ չի կարող»⁵⁴: Ս. Կիպրիանոսը բացարձակապես հրաժարվում է Եկեղեցուց դուրս գտնվողներին «քրիստոնյա» անվանել՝ կարծես թե կրկնելով իր ուսուցիչ Տերտուլիանոսի վճռական բացականչությունը. «Հետիոտները չեն կարող քրիստոնյա լինել»:

⁵² Письмо 43, նույն տեղում Կ. 1, Ը. 234.

⁵³ Письмо 42 к Корнелию, նույն տեղում Կ. 1, Ը. 212.

⁵⁴ О единстве Церкви, гл. 6, նույն տեղում Կ. 2, Ը. 181. Հմմտ. գլուխ ԺԷ, էջ 191: Հնարավոր է պատկերացնել, որ նա է Քրիստոսի հետ, ով հակառակ է գործում Քրիստոսի քահանաների դեմ, ինքն իրեն անջատում է Նրա եկեղեցականության և ժողովրդի հետ շփումից:

Դրա համար հասկանալի է Ս. Կիպրիանոսի պահանջը՝ Եկեղեցի ընդունելիս նորից մկրտել անգամ նովատիանականներին, թեպետ վերջիններս միայն հերձվածողներ են: Կիպրիանոսի համար հերձվածողների մկրտությունը Եկեղեցի ընդունելիս կրկնամկրտություն չէր, այլ հենց՝ մկրտություն: Ս. Կիպրիանոսը Կվինտոսին գրում էր. «Մենք հաստատում ենք, որ այնտեղից եկածներին մենք մեզ մոտ չենք կրկնամկրտում, այլ մկրտում ենք (*non re baptizari apud nos sed baptizari*), նրանք ոչինչ չեն ստանում այնտեղ, որտեղ ոչինչ չկա»⁵⁵: Եկեղեցուց դուրս մկրտությունն ուղղակի «դատարկ և անմաքուր ընկղմում» (*sordida et protana tinctio*) է⁵⁶: «Այնտեղ մարդիկ չեն լվացվում, այլ ավելի պղծվում են, մեղքերը չեն մաքրվում, այլ միայն ծանրանում են: Այդպիսի ծնունդը զավակներ է բերում ոչ թե Աստծու, այլ սատանայի համար»⁵⁷:

Եկեղեցուց դուրս որևէ մկրտության անվավերականության և Եկեղեցուն բոլոր դարձողների կրկնամկրտելու անհրաժեշտության մասին Կիպ-

⁵⁵ Письмо 58, гл. 1, Творения, ч. 1, с. 325.

⁵⁶ Письмо 53 к Квинту, гл. 1, նույն տեղում с. 326; Письмо 61 к Помпею, гл. II, նույն տեղում с. 351.

⁵⁷ О единстве Церкви, гл. 11, նույն տեղում ч. 2, с. 185-186. Հմմտ. Письмо 60 к Юбаяну, նույն տեղում ч. 1, с. 346.

րիանոսի գաղափարը հաստատվեց 256 թվականին, Կարթագենի Նկեղեցու տեղական ժողովում, որը նախագահում էր ինքը Կիպրիանոսը: Նզարափակիչ խոսքում, ի մի բերելով բոլոր եկեղեցական մտորումները, Ս. Կիպրիանոսն ասում է. «Հերետիկոսներին պետք է մկրտել Նկեղեցու մկրտությամբ, որպեսզի կարողանան թշնամիներից վերածվել բարեկամների, հակաքրիստոսներից՝ քրիստոնյաների»:

Ս. Կիպրիանոսի վերոբերյալ հայացքները, որոնք ակնհայտորեն կիսում էր նաև Կարթագենյան ողջ ժողովը, տեսանելի կերպով և բավականին որոշակիորեն վկայում են, որ երրորդ դարում անգամ չէին կարող մտածել, որ առանց Նկեղեցու հնարավոր է որևէ քրիստոնեություն: Այն ժամանակ հստակ ուսուցանում էին և որոշապես ասում, որ Նկեղեցուց հեռացածն արդեն քրիստոնյա չէ և զրկված է Սուրբ Հոգու շնորհից, ինչի համար և զրկված է փրկության հույսից: Այս գաղափարը հստակ արտահայտել է նաև Ս. Բարսեղ Մեծն Ամփիլոքիոս եպիսկոպոսին ուղղած իր նամակում: Ս. Բարսեղն ասում է, որ Նկեղեցուց հեռացածները նաև հերձվածի միջոցով չեն կարող կրողը լինել Սուրբ Հոգու շնորհի: Նկեղեցուց դուրս քահանայություն չկա և չի կարող տրվել Սուրբ Հոգու շնորհը: Ս. Բարսեղի այս գաղափար-

ները Քրիստոսի Եկեղեցին հաստատեց իբրև անհերքելի ճշմարտություն Զ (կանոն Բ) և Է (կանոն Ա) տիեզերական ժողովներում: Ամփիլոքիոսին ուղղված Ս. Բարսեղի նամակը ճանաչվեց կանոնական, դրա համար առ այսօր ընդգրկված է «Կանոնագրքում»:

Օգոստինոս Երանելին ընդունում է, որ տեսականորեն ընկալելի քրիստոնեական վարդապետությունը կարող է պահպանվել նաև Եկեղեցուց դուրս: Ծճմարտությունը մնում է ճշմարտություն, անգամ եթե արտահայտվել է չար մարդու կողմից: Զէ՞ որ դեերը ևս Պետրոս առաքյալի նման խոստովանում էին Քրիստոսին⁵⁸: Ոսկին, անկասկած, մնում է ոսկի ավազակների մոտ, թեպետև նրանք ծառայեցնում են վատ նպատակների: Քրիստոս մեկ անգամ աշակերտներին ասաց. «Ով որ ձեր թշնամին չէ, ձեր կողմն է» (Ղուկ. Թ. 50): Այստեղ կարելի է տեսնել, որ Եկեղեցուց դուրս գտնվողը որոշ հարցերում Եկեղեցու դեմ չէ և եկեղեցական ավանդից ինչ-որ բան ունի: Աթենացիները պաշտում էին անհայտ աստծուն (Գործք Ժէ 23), իսկ Հակոբոս առաքյալը վկայում է, որ դեերն էլ են հավատում (Հակ. Բ 19), իսկ նրանք, անշուշտ, Եկեղեցուց դուրս են: Դոնա-

⁵⁸ Մատթ. ԺԶ 16, Գ 8, 29, Մարկ. Ա 24, Ղուկ. Ը 28:

տիստների դեմ իր գրվածքներում Օգոստինոս Երանելին կարծես մանրամասն ապացուցում և հիմնավորում է հերձվածողական մկրտության վավերականությունը:

Սակայն, եթե Եկեղեցուց դուրս կարելի է պահպանել ճշմարիտ վարդապետությունը, եթե Եկեղեցուց հեռու կատարվող խորհուրդներն անգամ վավերական են, արդյո՞ք անպայման անհրաժեշտ է Եկեղեցին: Հնարավոր չէ՞ փրկությունը նաև Եկեղեցուց դուրս: Չի՞ անշատում Օգոստինոս Երանելին քրիստոնեությունը Եկեղեցուց: Հավանական չի՞ համարում քրիստոնեության գոյությունն առանց Եկեղեցու: Բոլոր այս հարցերին Երանելի Օգոստինոսը բացասական պատասխան է տալիս: Օգոստինոս Երանելին փրկության առաջնորդող քրիստոնեական կյանքը վերագրում է միայն Եկեղեցուն, իսկ Եկեղեցուց դուրս այդ կյանքը չի կարող լինել: Այն ամենը, ինչ Եկեղեցուց անջատվածները պահպանում են եկեղեցական հարստությունից, նրանց բարցարձակ որևէ օգուտ չի տալիս, այլ միայն վնասում է: Ինչո՞ւ: Օգոստինոս Երանելին պատասխանում է՝ որովհետև Եկեղեցուց անջատվածները սեր չունեն: Քրիստոս մատնացույց արեց այն նշանը, որով կարելի է ճանաչել իր աշակերտներին: Այդ նշանը քրիստոնեական վարդապետությունը չէ,

անգամ խորհուրդները չեն, այլ՝ միայն սերը: «Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. ԺԳ 35),- ասում էր Նա իր աշակերտներին: Խորհուրդները չեն փրկի, եթե դրանք ընդունողը սեր չունենա: Առաքյալն ասում է. «Եվ եթե... հասկանամ բոլոր խորհուրդներն (sacramenta)..., բայց սեր չունենամ, ոչինչ եմ» (Ա Կորնթ. ԺԳ 2): Մարգարեանում էր Կայիափան, բայց դատապարտվեց: Եկեղեցուց անջատումն ինքնին մեծագույն մեղք է, որը և ցույց է տալիս, որ հերձվածողները սեր չունեն: Մկրտությունը վերածնված, սակայն Եկեղեցու հետ չմիացած մեկը որևէ օգուտ չի ստանում մկրտությունից, քանզի սեր չունի. մկրտությունը փրկարար է դառնում նրա համար միայն այն ժամանակ, երբ միանում է Եկեղեցու հետ: Մկրտության շնորհը չի կարող մեղքերից մաքրել նրան, ով չի պատկանում Եկեղեցուն: Նրա գործողությունը կարծես կաթվածահար է լինում չարի, այսինքն՝ հերձվածի մեջ հերձվածողական սրտի համառությունը: Քանի որ Եկեղեցուց դուրս մկրտվողը, մկրտությունից հետո անմիջապես մուտք գործելով իր հերձվածի խավարը, բացահայտում է իր մեղավոր լինելը, սիրո բացակայությունը, ապա և մեղքերն անմիջապես վերադառնում են իր անձին: Իսկ որ

ներված մեղքերը վերադառնում են, եթե չկա եղբայրական սեր, պատկերավոր ցույց տվեց Տերը, երբ խոսում էր ծառայի մասին, ում տերը ներեց տասը հազար տաղանդը: Այնուհետև, երբ ծառան չխղճաց իր ընկերոջը, ով պարտք էր իրեն հարյուր դահեկան, ապա տերը պատվիրեց նրան ամենը վերադարձնել, որպեսզի ծառան պարտք մնա: Ինչպես այդ ծառան առ ժամանակ ստացավ պարտքի ներումը, այնպես և Եկեղեցուց դուրս մկրտվողը առ ժամանակ ազատվում է իր մեղքերից, սակայն քանի որ մկրտությունից հետո ևս նա մնում է Եկեղեցուց դուրս, ապա նրան են նորից վերագրվում մկրտությունից առաջ գործած բոլոր մեղքերը:

Նրա մեղքերը կներվեն միայն այն ժամանակ, երբ սիրով միանա Եկեղեցուն: Հերձվածողները զրկված են փրկության հույսից ոչ թե՝ որ նրանց մկրտությունն անվավեր է, այլ որովհետև նրանք Եկեղեցուց դուրս են և թշնամանում են: Միայն նա կարող է ստանալ և պահպանել Սուրբ Հոգու շնորհը, ով Եկեղեցու հետ միավորված է սիրով: Ով անջատվել է Եկեղեցուց, նա սեր չունի: Աստծու սեր չունի նա, ով չի սիրում Եկեղեցու միությունը. իզուր է նա ասում, թե ունի Քրիստոսի սերը: Սերը կարող է պահպանվել միայն Եկեղեցու հետ միությունամբ, որովհետև Սուրբ Հոգին կենդանաց-

նում է միայն Եկեղեցու մարմինը: Եկեղեցուց անջատվելու որևէ օրինական և բավարար պատճառ չի կարող լինել. ով անջատվել է Եկեղեցուց, նա Սուրբ Հոգի չունի, ինչպես մարմնից հատված անդամը կյանքի շունչ չունի, թեպետև որոշ ժամանակ պահպանում է իր նախկին տեսքը: Դրա համար Եկեղեցուց բոլոր անջատվածները, քանի դեռ հակառակվում են նրան, չեն կարող բարի լինել: Եթե անգամ նրանց վարքը գովելի թվա, բաժանումը Եկեղեցուց նրանց արդեն չար է դարձնում:

Այսպիսով՝ Օգոստինոս Երանելու վարդապետության համաձայն, Եկեղեցին ավելի նեղ հասկացություն է, քան միայն տեսական դրույթների իմաստով ընկալվող քրիստոնեությունը: Եկեղեցուց դուրս մնալով՝ կարելի է համաձայնել այդ տեսական դրույթների հետ. Եկեղեցու հետ միության համար դրանից բացի անհրաժեշտ է կամքի համաձայնություն (*consensio voluntatum*): Սակայն ակնհայտ է, որ առանց վերջինի՝ քրիստոնեական վարդապետության հետ սոսկ տեսական համաձայնությունը բացարձակ անօգուտ է, և Եկեղեցուց դուրս փրկություն չկա: Կյանքում քրիստոնեությունը կատարելապես համընկնում է Եկեղեցու հետ:

Ս. Կիրիլիանոսի և Օգոստինոս Երանելու հայացքները, ըստ երևույթին, տարբեր են, սակայն

նրանք միևնույն եզրակացության են հանգում՝
Եկեղեցուց դուրս փրկություն չկա (*extraecclesiam
nulla salus*): Մարդկանց փրկում է նրանց սերը,
որը Նոր ուխտի շնորհն է: Եկեղեցուց դուրս սերը
հնարավոր չէ պահպանել, քանզի այնտեղ հնա-
րավոր չէ ստանալ նաև Սուրբ Հոգի:

Հետևաբար, ի՞նչ գտանք Գ-Ն դարերի եկեղե-
ցական մտքի ներկայացուցիչների մոտ: Գտանք
բացարձակ նույնը, ինչին ավելի վաղ հանգել
էինք՝ քննելով Եկեղեցու մասին նորկտական-
յան վարդապետությունը և քրիստոնեության
վաղ շրջանի պատմության փաստերը: Քրիստո-
նեությունն ու Եկեղեցին չեն համընկնում միմ-
յանց միայն այն ժամանակ, երբ քրիստոնեութ-
յուն ասելով՝ հասկանում ենք ոչ ոքի ոչնչի չպար-
տավորեցնող ինչ-որ տեսական դրույթների հան-
րագումար: Սակայն քրիստոնեության այդպիսի
ընկալումը կարելի է միմիայն դիվական կոչել:
Հետևաբար, պետք է քրիստոնյա ճանաչել նաև
դեերին, որոնք ևս հավատում են և դրանից միայն
սարսափում: Գիտենալ քրիստոնեական վար-
դապետության համակարգը, համաձայնել հրա-
մանակարգերի հետ, արդյոք սա՞ է նշանակում
ճշմարիտ քրիստոնյա լինել: Իր տիրոջ կամքն
իմացող և այն չկատարող ծառան շատ կծեծվի
և, անշուշտ, արդարորեն: «Քրիստոնեությունը

ոչ թե լուռ համոզման, այլ գործի մեծություն մեջ է», – ասում էր Ս. Իգնատիոս Աստվածազգյացը⁵⁹:

Փրկության հույսը կորցնում է ոչ միայն նա, ով աղավաղում է քրիստոնեության հիմնական ճշմարտությունները. այդ հույսից զրկված է յուրաքանչյուր ոք, ով անջատվում է ընդհանրապես Եկեղեցուց, Քրիստոսի մարմնի մեկ ամբողջական օրգանիզմի ընդհանուր կյանքից: Եթե մարդ հեռացել է կամ հեռացվել է Եկեղեցուց, նա վախճանված է, մեռած է Աստծու և հավիտենականության համար: Դեռևս Ս. Իգնատիոս Աստվածազգյացը ֆիլադելֆիացիներին գրում էր. «Ով հետևի հերձված հրահրողին, նա չի ժառանգի Աստծու Արքայությունը» (գլուխ Գ):

Ոչ, Քրիստոս միայն Մեծ Վարդապետ չէ, նա աշխարհի Փրկիչն է, Ով մարդկությանը նոր ուժ տվեց, նորոգեց մարդկությանը: Ոչ միայն վարդապետություն ունենք մեր Փրկիչ Քրիստոսից, այլև՝ կյանք: Եթե քրիստոնեությունը չի ընկալվում իբրև նոր կյանք՝ ոչ թե աշխարհի տարերքներով, որին հայտնի են միայն անձնասիրության և եսապաշտության սկզբունքները, այլ Քրիստոսով ու Նրա վարդապետությամբ և ինքնուրացության և սիրո օրինակով, ապա քրիստոնեությ-

⁵⁹ К Рим., гл. III.

յունը լիարժեք կերպով համընկնում է Եկեղեցու հետ: Քրիստոնյա լինել՝ նշանակում է պատկանել Եկեղեցուն, քանզի քրիստոնեությունը հենց Եկեղեցին է, և Եկեղեցուց դուրս քրիստոնեական կյանք չկա և չի կարող լինել:

Ի վերջո, բավական է միայն ուշագիտ նայել Հավատի հանգանակին, որպեսզի հասկանաս, թե որքան կարևոր է Եկեղեցու գաղափարը: Չէ՞ որ հանգանակի մեջ գրեթե բոլոր հատվածները մտցվել են նրանից հետո, երբ հայտնվեցին զանազան հերետիկոսներ, ովքեր աղավաղում էին այս կամ այն ճշմարտությունը: Դրա համար ամբողջ Հավատի հանգանակը կարելի է կարծես հակաճառական կոչել: Դրա պատմությունն արդեն իսկ ցույց է տալիս, թե տարբեր հերետիկոսությունները հետ պաշարի ընթացքում ինչպես է համալրվել նրա բովանդակությունը: Բացարձակ այլ է հանգանակի իններորդ մասի պարագան: Այն ի սկզբանե է եղել հանգանակի մեջ, ուր մտցվել է անգամ ինչ-որ կեղծ վարդապետությունների հայտնությունից անկախ: Չէ՞ որ այն ժամանակ դեռ ինչ-որ անեկեղեցական քրիստոնեության մասին երազող բողոքականներ և աղանդավորներ չկային: Պարզ է, որ Եկեղեցու մասին գաղափարն ամենասկզբից ևեթ եղել է քրիստոնեական հավատալիքների հիմքում: Ի սկզբանե քրիստոնյաները

կազմում էին Եկեղեցին և հավատում նրա փրկարար բնույթին, և այն ճշմարտությունը, որ քրիստոնեությունն անբաժան է Եկեղեցուց, կարող ենք համարել հենց Տեր Հիսուս Քրիստոսից տրված:

Հետևապես, պետք է ընդունենք ճշմարտությունը, քրիստոնեությունը Եկեղեցուց բացարձակ անջատելի չէ և առանց Եկեղեցու քրիստոնեությունն անհնար է: Այս ճշմարտության ճանաչման անհրաժեշտությունն ավելի ակնհայտ կդառնամեզ համար, եթե համեմատենք այն հակառակ մոլորության հետ, եթե դիտարկենք, թե ինչի է հանգեցնում քրիստոնեության անջատումը Եկեղեցուց:

Իրականում Ավետարանի հակադրումը Եկեղեցուն և Եկեղեցու փոխարինումը քրիստոնեության անորոշ հասկացությամբ բազում ողբալի արդյունքեր է արձանագրում: Քրիստոնեական կյանքը ցամաքում է, հին և նոր վարդապետությունների շարքում հայտնվում է ևս մեկ ավելորդ ուսմունք, ընդ որում բավականին անորոշ, քանզի առանց Եկեղեցու, հնարավոր է առաջանա դրա ընկալման ամենակամայական և նույնիսկ միմյանց հակասող անհամար մի բազմություն: Այս առումով շատ փիլիսոփայական դպրոցների համեմատ քրիստոնեությունը ցածր է գտնվում: Իրապես, փիլիսոփայական դպրոցների հիմնա-

դիրներն իրենցից հետո թողել են իրենց ստեղծագործությունների ամբողջական գրքեր, թողել են առավել կամ նվազ հստակորեն շարադրված ուսմունքներ, առավել կամ նվազ չափով ամբողջությամբ արտահայտվել են, այնպես որ նրանց ուսմունքի զանազան կամայական մեկնությունների համար անսահման ազատություն չկա: Տեր Հիսուս Քրիստոս ինքը ոչինչ չի գրել: Այդ պատճառով չկա ավելի պարզ բան, քան քո ճաշակով Քրիստոսի վարդապետությունը վերամեկնաբանել և «քրիստոնեություն» հորինել՝ այդ անվան ներքո ներկայացնելով սեփական մոլորությունները: Նոր Կտակարանի սուրբ գրքերը գրվել են կրթություն չունեցող առաքյալների կողմից: Բոլոր ժամանակներում եղել են «առաքյալներին սրբագրողներ»⁶⁰, ինչպես նրանց կոչում է Սուրբ Իրինեոս Լիոնացին, որոնք իրենց առաքյալներից՝ այդ «գալիլեացի ձկնորսներից» բարձր են դասել: Արդյո՞ք ի դարի կրթված եվրոպացուն պատշաճում է հավատալ ինչ-որ «ձկնորսների» ասած ամեն խոսքին: Դրա համար շատերն ազատ են առաքյալներին վստահելու պարտավորությունից և ցանկանում են Քրիստոսի վարդապետությունը մեկնաբանել՝ առաջնորդվելով

⁶⁰ Против ересей, кн. 3, гл. 1, § 1.

միայն սեփական դատողություններով: Չէ՞ որ
Լև Տոլստոյն ուղղակի հայտարարեց, որ Պողոս
առաքյալը լավ չի ընկալել Քրիստոսի վարդապե-
տությունը⁶¹. հետևապես, Տոլստոյն ինքն իրեն
ավելի բարձր էր դասում Պողոս առաքյալից: Մե-
ծապես կարելի է զարմանալ, թե որքան հեռու են
գնում մարդիկ քրիստոնեության՝ իրենց «մեկնա-
բանության» մեջ: Ինչ որ ցանկանան, անմիջապես
գտնում են Ավետարանում: Պարզվում է, որ ամեն
դատարկ երազանք և անգամ չարամիտ գաղա-
փար ցանկության դեպքում կարելի է քողարկել
ավետարանական վարդապետությամբ:

Արդյո՞ք սքանչելի չէ, որ Եկեղեցու բոլոր ու-
րացողները մշտապես խոսում են Սուրբ Գրքի
նկատմամբ իրենց հարգանքից և միևնույն ժա-
մանակ շատ արագ անցնում անգամ Աստվա-
ծաշնչի գրքերի խեղաթյուրմանը: Մարդիկ հենց
թողնում են Եկեղեցին, անմիջապես սկսում են
Աստվածաշունչը յուրովի մեկնաբանել, և ամեն
մեկը մեկնաբանում է տարբեր կերպով: Քրիս-
տոս Հայր Աստծուն աղոթում էր իրեն բոլոր հա-
վատացողների միության համար, առաքյալները
հորդորում էին համախոհության, խոսում հավա-
տի միության մասին: Պարզվում է, որ առանց

⁶¹ Տե՛ս “Краткое изложение Евангелия” Ժնկյան հրատա-
րակության նախաբանը:

Եկեղեցու որևէ միություն հնարավոր չէ: Կրկին բաբելոնյան «լեզուների խառնում» է տեղի ունենալու: Եկեղեցում հավատը հազարամյակներով նույնն է մնացել՝ մշտապես ինքն իրեն հավասար: Սակայն այն գրեթե ամեն օր փոփոխվում է Եկեղեցին ուրացողների մոտ: Մշտապես նոր հերետիկոսներ ու աղանդավորներ են հայտնվում, և ամեն անգամ նրանց ուսուցիչը տարբեր կերպ է քարոզում: Հստակ է, որ առանց Եկեղեցու կորչում է նախ և առաջ Քրիստոսի վարդապետությունը և փոխարինվում մարդկային ժամանակավոր իմաստակություններով:

Ո՛չ, Քրիստոսի հավատն այն ժամանակ է միայն հստակ և որոշակի՝ մարդու համար, երբ նա ուղղամտորեն հավատում է Եկեղեցուն. միայն այդ ժամանակ է, որ սույն հավատի մարգարիտը մաքուր է, միայն այդ ժամանակ է, որ չի խառնվում տարաբնույթ կամայական կարծիքների և դատողությունների կեղտոտ աղբի հետ: Չէ՞ որ այդ մասին է դեռ Պողոս առաքյալն ասել, երբ կենդանի Աստծու Եկեղեցին կոչել է սյուն և հաստատություն ճշմարտության (Ա Տիմ. Գ 15):

Այսպիսով՝ Եկեղեցուց անշատելով՝ անգամ քրիստոնեական վարդապետությունն է դառնում բավականին անորոշ, անըմբռնելի, ըստ ցանկության՝ անընդհատ փոփոխվող:

Սակայն Եկեղեցու կեղծ փոխարինումը քրիստոնեությունամբ իր հետ բերում է մեկ այլ սարսափելի կեղծիք՝ Քրիստոս Աստվածամարդու կեղծ փոխարինումը Հիսուս Նազովրեցի մարդով: Ինչպես հավատը Եկեղեցու հանդեպ անբաժանելիորեն կապված է Քրիստոս Փրկչի աստվածության ընդունման հետ, այնպես և Եկեղեցու մերժումն անպայման իր հետ բերում է Աստծու Որդու մարմնավորման, Հիսուս Քրիստոսի աստվածության մերժումը: Զէ՞ որ որևէ ուսմունք տալու համար կարիք չկա անպայմանորեն Աստվածամարդ լինել: Քրիստոսի աստվածային արժանապատվությունն անհրաժեշտ է միայն նրան, ով Նրա մեջ Փրկչին է տեսնում, Ով մարդկային էության մեջ նոր ուժ հավելեց և հաստատեց Եկեղեցին: Իրականում, արդյո՞ք Հիսուս Քրիստոսի խոսքերից իսկ չի երևում այդ անխզելի կապը Եկեղեցու ճշմարտության և Նրա՝ Աստծու Որդի լինելու միջև: Սիմոն Պետրոսն ասաց, «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծու Որդին»: Այն ժամանակ Հիսուս նրան ասաց, «Եվ ես քեզ ասում եմ, որ դու վեմ ես, և այդ վեմի վրա (այսինքն՝ Աստծու մարմնավորման ճշմարտության վրա, որ խոստովանեց Պետրոս) պիտի շինեմ իմ եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն» (Մատթ. ԺԶ 16-18): Վաղ Եկեղեցին իր բոլոր ուժերի առանձ-

նահատուկ պրկումով պաշտպանում էր Հայր Աստծու հետ մարմնացյալ Աստծու Որդու համագոյության ճշմարտությունը, քանզի այն տենչում էր մարդկային էության իրական նորոգությանը, «նոր արարածի», այսինքն՝ Եկեղեցու վերակերտման: Դ դարի բոլոր դավանաբանական շարժումների հիմքում, իբրև ներքին շարժառիթ, ընկած էր հենց այն անասան հավատը, որ Սուրբ Երրորդության երկրորդ Անձը՝ Աստծու Որդին, իջավ երկիր, մարդացավ, մարդկանց համար բացեց Աստծու Արքայության գաղտնիքները, երկրի վրա հիմնեց Իր Եկեղեցին, չարչարվեց մարդկության մեղքերի համար և հաղթելով մահվանը՝ հարուստյուն առավ մեռյալներից՝ բացելով մարդկանց համար աստվածանմանության և աստվածացման ճանապարհը ոչ միայն հոգով, այլև մարմնով⁶²: Ինչո՞ւ էր պայքարն այդքան լարված արիոսականության հետ: Ինչո՞ւ արիոսականներն այդպիսի վճռական ընդդիմադրության հանդիպեցին, որ սուրբ Աթանաս Մեծը՝ Քրիստոսի Եկեղեցու այդ վեմը, մերժում էր նրանց «քրիստոնյա» կոչել: Չէ՞ որ արիոսականներն ընդունում էին Քրիստոսի վարդապետությունը, անգամ Նրան համարում էին Աստծու մարմնացյալ Որդի, սակայն Աստծու

⁶² Sthn Спасский А. А., История догматических движений в эпоху Вселенских Соборов, Сергиев Посад, 1906, с. 651.

այդ Որդուն հավասար և համագոչ էին համարում Հայր Աստծուն: Բայց ահա թե ինչ է գրում սուրբ Աթանաս Մեծը. «Արիոսականներին քրիստոնյա անվանողները մեծ և ծայրահեղ մոլորության մեջ են գտնվում, ինչպես Գրվածքները չընթերցողները և քրիստոնեությանն ու քրիստոնեական հավատին անծանոթները: Հիրավի, դա նույնն է, ինչ Կայիափային քրիստոնյա կոչել, դավաճան Հուդային դեռ դասել առաքյալների շարքը, պնդել, որ Փրկչի փոխարեն Բարաբբային խնդրողները որևէ վատ բան չեն արել, ապացուցել, որ Հիմենոսը և Աղեքսանդրոսը բարեմիտ մարդիկ են, իսկ առաքյալը ստում է նրանց հարցում: Սակայն քրիստոնյան չի կարող սա համբերությանմբ լսել, իսկ ով համարձակվի ասել սա, նրա մասին ոչ ոք չի մտածի, թե ողջամիտ է»⁶³:

Կրոնի հետ քիչ առնչվող ժամանակակից մարդու համար Դ դարի բոլոր դավանաբանական վեճերն անհասկանալի և կարծես թե անիմաստ են թվում: Սակայն «դա պաշար էր Քրիստոսի մասին երկու ծայրահեղ հակադիր հայացքների՝ խորհրդապաշտական-կրոնականի, որի համաձայն Նա կյանքի, փրկության, անմահության և աստվածացման աղբյուրն է, և ռացիոնալիստա-

⁶³ На ариан слово 1, 1-2.

կանի, ուր Քրիստոս ներկայացվում էր սոսկ իբրև աստվածացված ուսուցիչ և նորմալ օրինակ իր հետևորդների համար: Հարցը, ըստ էության, այն էր, թե ապագայում քրիստոնեությունը կմնա՞ իբրև կրոն իր լուսավոր հավատալիքների և խորհրդապաշտ ակնկալությունների ողջ համադրությամբ, թե՞ կվերածվի կրոնական երանգով պարզ փրկիսոփայության, ինչը քիչ չէր այդ ժամանակ: Դրա համար էլ հավատավոր հոգու ամենաանձնականին դիպչող՝ Աստծու Որդու աստվածության մասին հարցերը քննարկվում էին հրապարակներում և շուկաներում»⁶⁴:

Կարելի է ասել, որ այն ժամանակ էլ Եկեղեցին պաշտպանում էր իր Հիմնադրի համագոյությունը Հայր Աստծու հետ, իսկ արիստականները՝ ռացիոնալիստական խառնվածքի մարդիկ, մերժում էին մարմնացյալ Աստծու Որդու համագոյությունը՝ նրան դիտարկելով իբրև դպրոցի հիմնադիր, ով պարտադիր չէր, որ կատարյալ Աստված լիներ: «Նոր արարած», «նորոգված էություն»․ այլ կերպ ասած՝ կենդանի Աստծու Եկեղեցի լինելու ցանկությունը պահանջում է ճանաչել Քրիստոսի ամբողջ Աստվածությունը: «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»: «Աստծու Որդին

⁶⁴ Спасский А. А., նշյալ աշխատությունը, с. 200.

մարդու որդի դարձավ, որպեսզի մարդու որդիները դառնան Աստծու որդիներ»։ Ահա թե ինչպես են Աստծու մարմնավորման իմաստը սահմանում Սուրբ Իրինեոս Լիոնացին և Աթանաս Մեծը⁶⁵։ Եկեղեցու այս մեծ հայրերի վարդապետության համաձայն, փրկությունն անկարելի է առանց ճշմարիտ Աստծու մարմնավորման և մարդեղացման։ «Եթե մարդը չմիանար Աստծու հետ, նա չէր կարող անապականության հաղորդակից դառնալ»,– ասում է Սուրբ Իրինեոսը⁶⁶։ «Եթե Որդին արարած լիներ, ապա մարդը դեռ մահկանացու կմնար՝ չհամաձուլվելով Աստծու հետ»,– գրում է Սուրբ Աթանասը⁶⁷։ Նույնպիսի մտքերով է լեցուն մեր Ուղղափառ Եկեղեցու աստվածաշտույնությունը։ Ահա միայն օրինակներ Քրիստոսի ծննդյան տոնի արարողությունից։ «Այժմ Աստված երկիր իջավ, իսկ մարդը երկինք բարձրացավ...»⁶⁸։ «Հիսուս, տեսնելով հանցագործությանը բարոյապես քայքայված [մարդուն], ով ստեղծվել է

⁶⁵ Стів Попов М. В., Идея обожения в древневосточной Церкви, М., 1909; Կալի Религиозный идеал святого Афанасия Александрийского, Свято-Троицкая Сергиева Лавра, 1904. Հմմտ. Спасский А. А., նշյալ աշխատությունը, с. 198-199.

⁶⁶ Против ересей, кн. 3, гл. 17, 7.

⁶⁷ Слово 2 против ариан, глава LXIX.

⁶⁸ На литии стихира 2.

[Աստծու] պատկերով և նմանությամբ, անկասկած բնակվեց Կույսի արգանդում, որպեսզի նրա միջոցով նորոգի անկյալ Ադամին»⁶⁹: «Թող ցնծա ողջ արարչությունը և ուրախանա, քանզի Քրիստոս եկավ նորոգելու այն և փրկելու մեր հոգիները»⁷⁰: «Իմաստուն Արարիչը վերստին նորոգում է Աստծու պատկերով ստեղծված մարդուն, ով [մահվանից հետո] ամբողջապես ենթակա է քայքայման, ով զրկվել է ավելի լավ, աստվածային կյանքից»⁷¹: «Քրիստոսազարդ մարդիկ, ովքեր արժանացան իրենց ցանկության կատարման՝ Աստծու գալստյան, այժմ մխիթարվում են նորոգված կյանքով»⁷²: «Նա եկավ իրապես վերականգնելու և փառավորելու մարդկային անկյալ բնությունը»⁷³,– ահա ինչպիսի խոսքեր է Սուրբ Եկեղեցին դնում նորածին Տիրոջ բերանը: Ուղղափառ

⁶⁹ На стиховне стихира на “Славу”.

⁷⁰ На литии стихира 4.

⁷¹ Канон Космы, песнь 1, тропарь 1. Ср.: того же канона 2-й тропарь 3-й песни: “Причастием плоти горшая подав Божественного естества”.

⁷² Канон Иоанна, песнь 9, тропарь 2. Ср.: того же канона 2-й тропарь 7-й песни: “богатство обожения носяй”. Ирмос 4-й песни: “рода человека обновление, древле поя пророк Аввакум предвозвещает... людей во обновление слово”.

⁷³ Ирмос 9-й песни канона на повечерии в день предпразднества.

Եկեղեցին կրողն է մարդու գործուն փրկության, նրա ամբողջական վերածննդի, նորոգման, վերակերտման և աստվածացման գաղափարի, ինչին մարդ իր ուժերով չի հասնի, որքան էլ որ հնարամտի։ Եկեղեցին, որպեսզի հենց եկեղեցի լինի՝ նորոգված մարդկության հասարակություն, պահանջում է Աստծու Որդու մարմնացում։ Դրա համար Սուրբ Եկեղեցու կրոնական իդեալի ողջ բարձրությունն ընկալած եկեղեցու անդամ մարդկանց համար Հիսուս Քրիստոս միշտ եղել է և է Աստծու Որդի՝ համագոյ Հայր Աստծուն։ Սուրբ Իրինեոսը գրում է. «Ուրիշները որևէ նշանակություն չեն տալիս Աստծու Որդու էջքին և նրա մարմնացման տնտեսությանը, որը առաքյալներն ավետեցին և մարգարեները կանխասացին, որ դրա միջոցով կիրագործվի մեր մարդկության կատարելագործումը։ Եվ այդպիսիները պետք է դասվեն թերահավատների շարքին»⁷⁴։ Սուրբ Իրինեոսի ժամանակ որոշ կեղծ ուսուցիչներ պնդում էին, թե Քրիստոսի գործը սոսկ այն էր, որ նա չեղյալ հայտարարած հնի փոխարեն նոր օրենք տվեց։ Սուրբ Իրինեոսը, ընդհակառակն, հաստատում է, որ Քրիստոսի գալստյան նպատակը ոչ թե նոր օրենքը, նոր վարդապետությունն էր, այլ

⁷⁴ Доказательство апостольской проповеди, гл. XCIX.

հենց մարդկային անկյալ բնություն վերականգնումը: Նա գրում է. «Եթե ձեր մեջ հետևյալ միտքն է ծագում, թե՝ Տերն Իր գալստյամբ ի՛նչ նոր բան բերեց, ապա իմացե՛ք, որ Նա ամենը նոր բերեց նրանով, որ Ինքն Իրեն բերեց և այդպիսով նորոգեց և կենդանացրեց մարդուն»⁷⁵:

Իսկ եթե որևէ մեկը մերժում է Եկեղեցին իր կրոնական իդեալով, ապա և Քրիստոս, բնականաբար, նրա համար Բուդդայի, Կոնֆուցիոսի, Սոկրատեսի, Լաո-Յզիի և այլոց կողքին դառնում է միայն ուսուցիչ-իմաստուններից մեկը: Ընդ որում, պարզվում է, որ Քրիստոս այնքան էլ ինքնուրույն ուսուցիչ չէ: Հաճոյակատար գիտությունը մատնացույց է անում բազում տարբեր աղբյուրներ՝ ընդհուպ մինչև բաբելոնյան ասքեր և առասպելներ, որտեղից առնված է Քրիստոսի վարդապետությունը: Քրիստոս նմանեցվում է վատ գիտնականի, Ով կազմում է իր շարադրանքը՝ ոչ միշտ՝ հաջող՝ քաղելով տարբեր օտար գրքերից: Քրիստոնեության թշնամիները չարախնդրությամբ են մատնանշում «գիտական» ուսումնասիրությունների այդ արդյունքները և հայտարարում, որ, ըստ էության, իբրև թե Հիսուս Նազովրեցին նոր վարդապետություն չի էլ տվել:

⁷⁵ Против ересей, кн. 4, гл. XXXIV, § 1.

Նա միայն կրկնել է մինչ Իրեն ասվածը և այն, ինչ կիմանային և առանց Իրեն: Սակայն Եկեղեցուն հավատացողի համար քրիստոնեության վրա տարբեր «ներգործությունների» մասին այս բոլոր ճառերը չնչին իմաստ իսկ չունեն, որովհետև Քրիստոսի գործի էությունը, ինչպես ասվեց, բնավ վարդապետության մեջ չէ, այլ՝ փրկության: «Աստված իր միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի նրանով կենդանի լինենք» (Ա Հովհ. Դ 9, հմմտ. Դ 13): Թեպետ երկրային իմաստունների ուսմունքներում հանդիպում են քրիստոնեությանը մոտ ճշմարտության ըմբռնումներ, սակայն Քրիստոս՝ Աստծու մարմնացյալ Որդին, նորոգեց մարդկային էությունը, ստեղծեց Եկեղեցին, առաքեց Սուրբ Հոգուն և դրանով սկիզբ դրեց նոր կյանքի, ինչը մարդկային ցեղի ոչ մի իմաստուն չէր կարող անել: Եկեղեցու հաստատման համար էր հենց անհրաժեշտ Աստծու Որդու էջքը երկիր և Նրա մահը խաչի վրա: Դրա համար քրիստոնեությունը Եկեղեցուց բոլոր անշատողները վաղ թե ուշ հանգում են Քրիստոս Աստվածամարդու մերժման աստվածանարգության և հանգում են ճիշտ այն պատճառով, որ Քրիստոսի աստվածամարդ լինելը մերժելիս նրանց համար Եկեղեցին անպետք է դառնում:

Քիչ չեն մեզանում մարդիկ, ովքեր երազում են հենց անեկեղեցի քրիստոնեության մասին: Այդ մարդկանց մոտ կարծես մշտապես առկա է անիշխանական կարգի մի մտածողություն. նրանք կամ անընդունակ են, կամ էլ՝ ավելի հաճախ ուղղակի ծուլանում են մինչև վերջ խորհել իրենց մտքերի մասին: Սակայն, չխոսելով արդեն իսկ այդ անեկեղեցի քրիստոնեության բացահայտ հակասությունների մասին, միշտ կարելի է տեսնել, որ նրանում բացարձակապես չի լինում իրական շնորհատու քրիստոնեական կյանք, շնորհաբեր ներշնչանք, խանդավառություն: Երբ մարդիկ վերցնում են Ավետարանը՝ մոռանալով, որ Եկեղեցին է այն տվել իրենց, նրանց համար այն կարծես Ղուրան լինի՝ Ալլահի կողմից երկնքից վար նետած: Իսկ երբ նրանք հաջողեն Եկեղեցու մասին վարդապետությունը ինչ-որ ձևով չնկատել Ավետարանում, ապա ողջ քրիստոնեությունից մնում է միայն ուսմունք, որը՝ նույնքան անկարող է վերակերտել կյանքը և մարդուն, ինչպես և ամեն այլ ուսմունք: Մեր նախածնողներ Ադամը և Եվան ցանկանում էին առանց Աստծու դառնալ «իբր աստվածներ»՝ հույսները դնելով գեղեցիկ խնձորի մոգական ուժի վրա: Այդպես և շատ մեր ժամանակակիցներ երազում են փրկվել առանց Եկեղեցու և

առանց Աստվածամարդու, թեպետև Ավետարանի հետ: Նրանք Ավետարանի վրա նույն կերպ են հույս դնում, ինչպես Ադամը և Եվան՝ դրախտի խնձորին: Սակայն գիրքն ի վիճակի չէ նրանց նոր կյանք շնորհել: Եկեղեցին մերժող մարդիկ մշտապես խոսում են «ավետարանական սկզբունքների», ավետարանական վարդապետության մասին, սակայն քրիստոնեությունն իբրև կյանք բացարձակ խորթ է նրանց համար: Անեկեղեցական ձևի մեջ քրիստոնեությունը միայն ձայն է՝ երբեմն զգացական, սակայն մշտապես ծաղրական և անկենդան: Ահա հենց այդ մարդիկ Եկեղեցին մերժելով՝ քրիստոնեությունը դարձրին, Վ. Ս. Սոլովյովի խոսքի համաձայն, «մահու չափ ձանձրալի»: «Երբ Եկեղեցու շինությունը քանդված է և դատարկ, վատ հարթեցված վայրում խրատական քարոզ է արվում, ապա դա տխուր և անգամ սարսափելի է լինում»: Սա ասել է Դավիթ Շտրաուսը:

Վերջին շրջանում մեզանում անեկեղեցական քրիստոնեության առավել հետևողական քարոզիչը Լև Տոլստոյն էր: Իր այդ քարոզով Տոլստոյը բավականին շատերին է գոհացրել, բայց հենց տոլստոյականության օրինակով կարելի է սքանչելի կերպով նկատել քրիստոնեության սնանկությունն առանց Եկեղեցու:

Տոլստոյի կեղծ ուսմունքի ելակետը կարելի է համարել քրիստոնեության կտրուկ անջատումը եկեղեցուց: Տոլստոյը վճռականապես դատապարտեց եկեղեցին՝ միևնույն ժամանակ խոնարհվելով քրիստոնեության առջև: Սակայն նույն պահին քրիստոնեությունը նրա համար դարձավ միայն ուսմունք, իսկ Քրիստոս՝ միայն ուսուցիչ: Երբ մեր առջև ինչ-որ վարդապետություն է, ապա այդքան էլ կարևոր չէ, թե ո՞ւմն է այն, ո՞վ է վարդապետը: Տոլստոյի համար էլ Քրիստոսի կենդանի անձը կորցրեց որևէ նշանակություն: Վերցնելով Քրիստոսի վարդապետությունը՝ Տոլստոյը հնարավորություն ստացավ մոռանալ նրա մասին և մերժեց Քրիստոս Աստվածամարդուն՝ նրան կոչելով «խաչված հրեա», «մահացած հրեա»: Դրանով արդեն իսկ հատվեց Ավետարանը սկզբում, ուր պատմվում է Մարիամ կույսից Աստծու Որդու գերբնական ծնունդի մասին, և վերջում, ուր հաղորդվում է մեռյալներից Աստծու Որդու հարության և երկինք համբարձման մասին: Բայց Տոլստոյը չսահմանափակվեց միայն Ավետարանի այդ «հատումով» սկզբից և վերջից, այլ իր ճաշակով փոփոխեց նաև ողջ միջուկը՝ այդպիսով ստիպելով իր Հիսուսին ասել այն, ինչ նրան իր աշխատասենյակից կկարգադ-

րեր յասնոպուլյանյան⁷⁶ կեղծ ուսուցիչը: Բացի այս, Քրիստոս Ինքն է խոստացել իր աշակերտներին առաքել այլ Մխիթարիչ: Այդ Մխիթարիչին, Աստվածային Մխիթարիչին, Քրիստոսի Եկեղեցին համարում է աղբյուր եկեղեցական նոր շնորհաբեր կյանքի, իսկ Պողոս առաքյալը, ինչպես տեսանք, մշտապես խոսում է Եկեղեցում բնակվող Սուրբ Հոգու մասին: Չնայած դրան, Տոլստոյը մերժեց Սուրբ Հոգուն, Ուղղափառ Եկեղեցին ծաղրելով կոչեց ոչ թե Քրիստոսի, այլ «սուրբհոգյան», ապա նաև ստորացավ մինչև սրբապղծություն սուրբ խորհուրդների նկատմամբ, որոնցում Եկեղեցու անդամը ստանում է Սուրբ Հոգու բարերար օգնությունը նոր կյանքի համար: Բավականին հատկանշական է, որ Տոլստոյի գրվածքներում շատ հստակ երևում է, թե ինչպես է Եկեղեցու մերժումը անքակտելիորեն կապված Աստծու Որդու մարմնացման ժխտման հետ: «Չորս Ավետարանների միացումը և թարգմանությունը»-ի⁷⁷ առաջաբանում նա գրում է. «Ինձ բերել են այն համոզման, որ որևէ Եկեղեցի չկա»: «Ես քրիստոնեությունը դիտարկում եմ իբրև կյանքին իմաստ հաղորդող վարդապետություն», - գրում է նա

⁷⁶ Ясная Поляна - Կոմս Լ. Տոլստոյի կալվածքի անունն է (ծնթ. խմբ.):

⁷⁷ Ժնև, 1890, էջ 3:

«Ավետարանի համառոտ շարադրանքի» նախաբանում⁷⁸։ Իսկ մեկ էջ հետո արդեն կարդում ենք. «Ես պատասխան էի փնտրում կյանքի հարցին և դրա համար ինձ բացարձակ միևնույն էր, թե Հիսուս Քրիստոս Աստված էր կամ Աստված չէր»⁷⁹ (էջ 11)։ Արդյոք պարզ չէ՞, որ ճշմարտությունից խոտորվելու բոլոր այս աստիճանները սերտորեն փոխկապակցված են։ Չկա Եկեղեցի՝ չկա և Քրիստոս Աստվածամարդը։

Քրիստոսի գործունեությունը սահմանափակելով միայն նրա վարդապետությամբ և ժխտելով Եկեղեցին՝ Տոլստոյը տրամաբանական անհրաժեշտությամբ եկավ քրիստոնեություն քանդող եզրահանգումների։ Իսկ մեզ Տոլստոյն ակներևաբար ցույց տվեց, թե ինչին է հանգեցնում Եկեղեցուց քրիստոնեության անհեթեթ անջատումը և Եկեղեցու մերժումը հանուն թվացյալ քրիստոնեության։ Եթե քրիստոնեությունն անջատվի Եկեղեցուց, ապա կարիք չկա Փրկչի աստվածության, անհրաժեշտ չէ նաև Սուրբ Հոգին։ Իսկ առանց Սուրբ Հոգու և Փրկչի աստվածության, Աստծու Որդու մարմնավորման՝ Հիսուս Նազովրեցու վարդապետությունը կյանքի համար նույնքան քիչ իրական է, որքան որևէ մեկ

⁷⁸ Անդ, էջ 9։

⁷⁹ Անդ, էջ 11։

այլը, քանզի չի կարելի զանազանել ուսմունքները, որոնց համաձայն գիտելիքը առաքինություն է: Տոլստոյի կողմից քրիստոնեության անեկեղեցական ընկալման սնանկությունը արդեն պարզ է նրանից, որ տոլստոյականությունը որևէ կյանք չի ստեղծել: Քրիստոնեական կյանքը հնարավոր է միայն կենդանի Քրիստոս Աստվածամարդու հետ միության մեջ և եկեղեցում մարդկանց բարերար միության մեջ: Տոլստոյականության մեջ չկա և՛ մեկը, և՛ մյուսը, իսկ ահա եկեղեցական նահատակների և սրբակյացների փոխարեն, միության փոխարեն, որ առաքյալներին ու հավատացյալներին կապում էր այն աստիճան, որ «մեկ սիրտ ու մեկ հոգի» էին, – այս բոլորի փոխարեն տոլստոյականությունից ունենք միայն ծաղրանկարային և կատարյալ անկենդան «տոլստոյական գաղութներ»: «Ով չի ընդունում Աստծու Որդուն, չի ընդունում նաև կյանքը» (Ա Հովհ. Ե 12): Տոլստոյը, ինչպես ասում էր Վ. Ս. Սոլովյովը, իր շուրջը համախմբեց ընդամենը մի քանի տասնյակ անմիտ մարդկանց, ովքեր միևնույն ժամանակ միշտ պատրաստ էին դեսուդեն ցրվել: «Մեծ ուսուցիչը», փաստորեն, ոչ ոքի և որևէ բան չսովորեցրեց, և «կանաչ փայտիկը» որևէ մեկի չփրկեց, քանզի փրկության համար ոչ թե փայտիկ է անհրաժեշտ, այլ՝ Քրիստոսի խաչը:

Տողատոյից մնացին ոչ մեկին պիտանի տողատոյական թանգարանները, սակայն չմնացին տողատոյականներ:

Այսպիսով՝ տողատոյականության օրինակով տեսնում ենք, որ Եկեղեցու մերժումն առաջնորդում է հենց քրիստոնեության սարսափելի աղավաղման և անգամ քայքայման, իսկ անեկեղեցական քրիստոնեությունը հերքվում է իր լիակատար անկենդանությամբ: Այս անկենդանությամբ խայտառակվում է նաև բողոքական կեղծ վարդապետությունը: Ինչի՞ հասան բողոքականները՝ իրենց իմաստակություններով նսեմացնելով Եկեղեցու գաղափարը: Հասան միայն բաժանման և ամենից անհույս բաժանման: Բողոքականությունն անդադար տրոհվում է աղանդների: Բողոքական եկեղեցական կյանք չկա, այլ գոյություն ունի առանձին աղանդների և համայնքների ինչ-որ «հազիվ կենդանի» մի կյանք: Համաեկեղեցական կյանքը, որի համար աղոթում էր Տեր Հիսուս Քրիստոս քահանայապետական աղոթքում⁸⁰, բողոքականությունը սպանեց: Իրականում, բողոքականության ծայրահեղ ուղղափառներն ավելի մոտ են ուղղափառ քրիստոնյաներին, քան ծայրահեղ ռացիոնալիստական գաղափարների

⁸⁰ Հովհ. 17-րդ գլ. (ծնթ. խմբ.):

բողոքականներին, որոնք որևէ ընդհանրություն չունեն, բացառությամբ կամովին և առանց որևէ հիմքի յուրացված անվան, քանզի դրա համար դատաստանի չեն ենթարկվում: Ի՞նչ միություն է հնարավոր նրանց միջև: Ի՞նչ ընդհանուր կյանք կարող են նրանք ունենալ:

Մեր անունից չէ, որ այս ամենն ասում ենք: Անկեղծության պահերին միևնույնը, անգամ ավելի խիստ, ասում են նաև իրենք՝ բողոքականները: Մեկը գրում է. «Երկիրը, որը բարեփոխության օրրանն էր, դառնում է գերեզման՝ բարեփոխված հավատի համար: Բողոքական հավատը մահամերձ է: Գերմանիայի մասին բոլոր նորագույն աշխատությունները, ինչպես նաև բոլոր անձնական դիտարկումները դա են պնդում»: Մյուսը հարցնում է. «Արդյո՞ք մեր աստվածաբանության մեջ չեն նկատում այն փաստը, որ դրա ներկայացուցիչները կորցրել են ամեն դրականը»: Ավելի տխուր են երրորդի խոսքերը. «Բողոքականության կենսական ուժը սպառվում է դավանաբանական դպրոցների, աստվածաբանական վեճերի, եկեղեցական գժտությունների խառնաշփոթում... Բարեփոխումը մոռացվում է կամ արհամարհվում. Աստծու խոսքը, որի համար զոհվում էին հայրերը, կասկածի տակ է առնվում. բողոքականությունը մասնատված է, թույլ,

անկարող»։ Իսկ լյութերականության ուղղափառ ուսումնասիրողն իր աշխատությունն ամփոփում է հետևյալ՝ ոչ սփոփիչ եզրահանգմամբ. «Լյութերականները, իրենք իրենց ազդեցության տակ ընկնելով, ապավինելով իրենց սուրբեկտիվ գիտակցությանը և հավատին, քաջաբար սխալ ճանապարհով ընթացան։ Ինքնիշխան և ինքնախրատական անձն աղճատեց քրիստոնեությունը, խեղաթյուրեց ամենախորհրդավոր դավանանքը՝ կործանման եզրին կանգնեցնելով լյութերականությանը։ Ավելի ու ավելի է մերժվում առաջին բարեփոխիչների հեղինակությունը լյութերականության կողմից, ավելի և ավելի կործանվում է հավատալիքների ընդհանրությունը, և ավելի է լյութերականությունը մոտենում իր հոգևոր մահվանը»⁸¹։ Վերջին շրջանում քիչ չեն բողոքականության մեջ տեղ գտած երևույթները, որոնք ցույց են տալիս Եկեղեցուց քրիստոնեության անջատման բողոքականության իրագործած ողջ կործանարարությունը և խաբեությունը։ Հովիվների շարքերում հայտնվեցին այնպիսիք, ովքեր իրենց ծխականներին ոչ միայն խաչալ Քրիստոսին չէին քարոզում, այլև մերժում էին անձնական Աստծու (Յահվեի) գոյությունն իսկ։ Ուրիշները

⁸¹ Терентьев Н., Лютеранская вероисповедная система по символическим книгам лютеранства, Казань, 1910, с. 460.

բացահայտորեն համակրում էին քրիստոնեութ-
յան նենգամիտ մի թշնամուն (Դրևսին), ով, քո-
ղարկվելով գիտությունամբ, ապացուցում էր, որ
Քրիստոս բնավ չի ապրել որևէ տեղ երկրի վրա,
որ ողջ Ավետարանը, հետևաբար, մտացածին է:
Մեզ մոտ շատերը հակված են բողոքականնե-
րին քրիստոնյա կոչել: Նման մարդկանց մասին
դժվար է պնդել, որ ողջամիտ են (տե՛ս Ս. Աթա-
նաս Մեծի վերոբերյալ խոսքը): Չէ՞ որ այժմ ամեն
մեկին պարզ է, որ կորցնելով Նկեղեցին բողոքա-
կանները կորցնում են նաև Քրիստոս Աստվածա-
մարդուն: Ներկայիս բողոքականները բացահայտ
ընդունում են, որ Գերմանիայում հովիվների մեկ
երրորդն է ընդունում Քրիստոսի աստվածություն-
նը: Ի՞նչ է դա, եթե ոչ հոգևոր մահ, քանզի առաք-
յալի խոսքի համաձայն, ով չի ընդունում Աստծու
Որդուն, չի ընդունում նաև կյանքը (Ա Հովհ. Ե 12):

Ժամանակին Մոսկվայում աղմուկ էր բարձ-
րացել «Համաշխարհային քրիստոնեական ուսա-
նողական միություն» հետ կապված: Ռուս ուղ-
ղափառ սրբությունների կենտրոն էին ժամանել
այդ միության տարբեր միասիրտներ, միատեր
Մոտտեր և միսս Ռաուսներ, որոնք անգլախոս
քարոզով դիմեցին ռուս ուսանողությանը: Աս-
վում էր, որ միությունը հարանվանային չէ, դրա-
նում ազատություն է տրվում ամեն քրիստոնեա-

կան դավանանքի: Դավանանքները համախմբվում են միություն մեջ «Դաշնային հիմունքներով»: Հետևաբար, ենթադրվում է Եկեղեցուց կախման մեջ չգտնվող ինչ-որ ընդհանուր քրիստոնեության հնարավոր գոյություն: Սակայն այդ իսկ պատճառով այս միությունը մահաժին բան է: Կարո՞ղ է լինել, կա՞ այդ «միություն» մեջ ինչ-որ քրիստոնեական կյանք: Եթե կա անգամ, շատ խղճուկ է: Պատկերացրեք քրիստոնեական ուսանողական կազմակերպությունների «համագումար», որին ներկայացել են «Դաշնային-միավորված հարանվանային միավորումների պատգամավորները», «հայտարարություններով», «ցանկություններով» հանդերձ համագումարը և այլն: Եթե նույնիսկ կա որևէ միություն, ապա իրական եկեղեցական ուղղափառ կյանքից անսահմանորեն ցածր է այն: Ինչ-որ «Դաշնային հիմունքների» վրա խարսխված միության մեջ հազիվ կենդանի կյանքը կարող է նոր հայտնություն թվալ, բերկրանք միայն դատարկ հոգու համար: Նրա համար, ով թափառում է հեռու՝ ոչ միայն սուրբ Ուղղափառությունից, այլև որևէ հավատից: Կյանքի այս փայլատակումների համեմատ ինչպիսի՞ բարիք է ուղղափառ ժողովական կյանքի ամբողջականությունը: Երբ լսում ես «Համաշխարհային քրիստոնեական ուսանողական

միության» զեկույցների և դատողությունների մասին, սիրտդ տխրությամբ ու տրտմությամբ է լցվում: Աստծուն փափագող, կյանքի ձգտող որքա՛ն անկեղծ մարդիկ են «սովամահ լինում», ինչ-որ օտարերկրյա ուսանողական միության «թեփանքով սնվում»: Մի՞թե նրանք չգիտեն, թե հացի ինչպիսի առատություն է Երկնավոր Հոր տան մեջ, ուղղափառ Եկեղեցում: Պետք է միայն մոռանալ ամեն տեսակի «դաշնային հիմունքներ», ազատորեն տրվել լիակատար հնազանդության ուղղափառ Եկեղեցուն և կպչել եկեղեցական կյանքի լիությանը, Քրիստոսի մարմնի կյանքին:

Եղել են դեպքեր, երբ թեթևամիտ մարդիկ մտածել են համաշխարհային կրոն ստեղծել գրասենյակային ճանապարհով, այդ «ընդհանուր կրոնով» համախմբվելու հրավերով միլիոնավոր դիմումներ են առաքել՝ դրանց կցելով այդ կրոնի նախագիծը: Սակայն այդ նախագիծը կազմվում էր շատ ընդհանուր արտահայտություններով. դրա տակ միևնույն պատեհությունամբ կարող էր ստորագրել կաթոլիկն ու բողոքականը, մահմեդականն ու հրեան: Եվ, անշուշտ, եթե բոլոր մարդիկ համաձայնեին այդ նախագծին, ապա դա բնավ չէր միավորի նրանց. ընդհանուր վերացական արտահայտությունները ոչ ոքի ոչնչի չէին պարտավորեցնի, մարդիկ կմնային նույնը,

որևէ փրկություն ոչ ոք չէր ստանա: Բացարձակապես խենթություն է ինչ-որ ուսմունքի հիման վրա մարդկանց միավորելը, դրա համար պետք է հատուկ գերբնական զորություն, որը և ունի Քրիստոսի մի, Սուրբ, Հնդհանրական Եկեղեցին:

Բնավ դժվար չէ մեր ժամանակակից կյանքի բոլոր այս և նմանատիպ երևույթների առնչությամբ պատասխանել հետևյալ հարցին, թե ինչի՞ հիման վրա կարող էին դրանք հայտնվել և ո՞րն է դրանց իմաստը: Դրանց հիմքը հենց այն է, որ մեր շատ ժամանակակիցների համար Եկեղեցու ճշմարիտ ուղղափառ քրիստոնեական իդեալը չափազանց բարձր էր: Քրիստոս աշխարհ էր եկել նորոգելու մարդկային էությունը: Այդ նորոգման համար Նա Եկեղեցին էր ստեղծել: Նորոգությունն առանց ճիգ ու ջանքի չի կատարվում: Այստեղ, առաքյալի համաձայն, պետք է կռվել արյուն թափելու շափ (Եբր. ԺԲ 4), կռվել, անշուշտ, մեղքի հետ: Սակայն մարդիկ սիրեցին հենց իրենց մեղսալի բնությունը, սիրեցին մեղքը և չեն ուզում բաժանվել դրանից: Այժմ մարդիկ այնքան են իրենց անձնասիրության մեջ արմատացել, որ Եկեղեցու ուղղափառ իդեալը անձի նկատմամբ ինչ-որ բռնության, անհասկանալի և անպետք դեսպոտիզմ է թվում նրանց: Եկեղեցու ուղղափառ իդեալը յուրաքանչյուրից պահանջում է

բավականին շատ ինքնուրաց խոնարհություն,
ընդհանրապես սեր: Դրա համար էլ սիրուց աղ-
քատ սիրտ ունեցող մեր ժամանակակիցներին՝
ու՛մ համար ամենից թանկն իրենց մեղսալի անձ-
նասիրությունն է, այս իդեալն անհարմար բեռ է
նկատվում: Ինչպե՞ս վարվել: Օ՛հ, մարդկությունը
քաջ գիտի, ինչպես վարվել նման դեպքերում:
Երբ ինչ-որ իդեալ ուժերից վեր է, խիստ ծանր
է թվում, այն փոխարինում են ավելի համապա-
տասխանով, ցածրացնում են իդեալը՝ աղավա-
ղելով դրա էությունը, սակայն երբեմն թողնելով
նախկին անունը: Չէ՞ որ այժմ շատերն են արդեն
ձեռք թափ տվել սիրո իդեալի վրա: Ասում են՝ սի-
րո հիման վրա հասարակական կյանք կառուցելը
բացարձակապես անիրականանալի երազանք է,
որից ավելի լավ է շուտափույթ հրաժարվել, որ-
պեսզի հետագայում ավելի վատ չլինի: Բացի այդ,
եկեղեցական, անգամ ընդհանրապես կրոնական
կյանքի իդեալով տարվելը ուղղակի վնասակար
են համարում. այն իբր թե արգելակում է հասա-
րակական կյանքի անհրաժեշտ առաջընթացը:
Սերը համարելով իբր անպիտան բան հասարա-
կական կյանքում, սոսկ մարդու «մասնավոր»
պետքերի համար՝ ողջ ուշադրությունը դարձրել
են բացառապես իրավունքի վրա, որով և մտա-
ծում են դարմանել մարդկային բոլոր տկարութ-

8 - Իլարիոն արք.

յունները: Դրա հետ մեկտեղ առաքինությունն ուղղակի փոխարինվում է կարգապահությանը հետևելով և արտաքին պարկեշտությամբ: Ոսկին թանկ է, և դրա փոխարինման համար հորինել են ոսկեզօծումը, իսկ չբավականացնող առաքինության փոխարինման համար հորինել են պարկեշտությունները:

Բացարձակ նույն կերպ են վարվում նաև Եկեղեցու իդեալի հետ, որը հոգիների և սրտերի լիարժեք միություն է պահանջում: Եկեղեցին փոխարինում են քրիստոնեությանը, ինչպես մենք արդեն ասել ենք, բացարձակ անորոշ չափումով: Լավ է. այնուամենայնիվ, «քրիստոնեությունը» պատշաճ անվանում է: Բայց առանց Եկեղեցու այդ անվանման ներքո կարելի է ամեն ինչ ենթադրել, ինչ որ միայն ցանկանան:

Այստեղ հնարավոր չէ չնկատել մարդասպանի, հին օձի գործողությունը: Դրա համար էլ դեերը լույսի հրեշտակի կերպարանք են ընդունում, քանզի իրենց սեփական տեսքը գարշելի է մարդուն: Այնքան էլ հեշտ չէ մարդուն տրամադրել ամբողջական անաստվածության և աստվածհայհոյության: Սատանան գիտի դա, դրա համար էլ զարտուղի ճանապարհով է գնում, ներշնչում է քրիստոնեությունը միայն անջատել Եկեղեցուց՝ ամբողջովին վստահ լինելով, որ առանց Եկեղե-

ցու մարդիկ, միևնույն է, կհասնեն անաստվածության, կկորցնեն փրկությունը և մահվամբ իր լիակատար իշխանության ներքո կհայտնվեն: Սատանան այժմ էլ, ինչպես անապատում Քրիստոսի փորձության ժամանակ, դիմում է Ս. Գրքին՝ ապացուցելու Եկեղեցուց քրիստոնեության անշատման հնարավորությունը:

Սակայն մեր ժամանակի ողբերգությունն այն է, որ ոչ ոք չի ցանկանում անկեղծ սրտով խոստովանել իր հոգևոր աղքատությունը՝ այն աստիճան խստասրտությամբ, որ ծանր և անընկալելի է դարձել Քրիստոսի Եկեղեցու իդեալը: Ո՛չ, ոսկին փոխարինելով պղնձով, բուն ոսկուն չեն ցանկանում որևէ արժեք տալ: Ներկայիս կատաղությամբ հարձակվում են Եկեղեցու վրա և մերժում Եկեղեցու իսկ գաղափարը՝ երեսպաշտությամբ քողարկվելով «անձի ազատության», քրիստոնեության «անհատական յուրովի ընկալման», ազատության և հոգու կրոնի մասին բարձրագույն և շաբլոնային-գեղեցիկ նողկալի արտահայտություններով: Մեկ եկեղեցական հասարակության Քրիստոսի իդեալը («Թող բոլորը մեկ լինեն», «ինչպես Մենք մի ենք») նվաստացվում է և խեղվում, դրա համար էլ կորցնում է իր կենսական նշանակությունը: Անեկեղեցական քրիստոնեությունը, ինչ-որ «ավետարանական» քրիս-

տոնեությունը, տարբեր համաշխարհային քրիստոնեական ուսանողական միությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ Քրիստոսի Եկեղեցու գաղափարի նվաստացում և աղավաղում, ինչը սպանում է ցանկացած ճշմարիտ քրիստոնեական շնորհաբեր եկեղեցական կյանք:

Սուրբ Իրինեոս Լիոնացին հնարավոր չէր նկատում քրիստոնեական ճշմարտության անջատումը Եկեղեցուց: Նա գրում է. «Պետք չէ այլոց մոտ փնտրել ճշմարտությունը, որը դյուրությամբ կարելի է ստանալ Եկեղեցուց, քանզի առաքյալները, ինչպես մեծահարուստը գանձարանի մեջ, նրա մեջ լիովին հավաքել են այն ամենը, ինչ վերաբերում է ճշմարտությանը, ուստի ամեն ցանկացող վերցնում է նրանից կյանքի ջուրը: Նա է հենց կյանքի դուռը, իսկ մնացյալները գող են և ավազակ»⁸²: Այս ճշմարտության մոռացությունը մշտապես բոլորին մղել է միայն թափառելու: Իր ժամանակի ուրացողների մասին Սուրբ Իրինեոսը գրում է. «Կյանքի համար նրանք չեն սնվում մոր պտուկներից, չեն օգտվում Քրիստոսի մարմնից բխող մաքրագույն աղբյուրից, այլ իրենց համար փորում են հողի մեջ խորտակիչ ջրհորներ և ըմպում ցեխից փտած ջուրը՝ հեռանալով Եկե-

⁸² Против ересей, кн. 3, гл. IV, 1.

ղեցու հավատից, որպեսզի դարձի չգան, և մեր-
ժելով Հոգուն, որպեսզի խելքի չգան: Հեռանալով
ճշմարտությանից՝ հերետիկոսներն ըստ արժան-
վույն տարվում են ամեն մոլորությանմբ՝ երբեմն
տարբեր կերպ մտածելով միևնույն առարկա-
ների մասին և երբեք հաստատուն կարծիք չու-
նենալով, ցանկանալով առավելաբար խոսքերի
սոփեստ լինել, քան ճշմարտության աշակերտ-
ներ»⁸³: Այժմ էլ ուրացողները «խարխափումի»
նույն տխուր ճակատագիրն են ունենում:

Դրա համար էլ մեր ժամանակներում այդքան
շատ տարբեր, բավականին տարօրինակ «որո-
նումներ» կան, որովհետև մոռացվել է Եկեղեցու
ճշմարտությունը: Առաքելական դարում փրկվող-
ները միանում էին Եկեղեցուն, իսկ ուրիշներից ոչ
ոք չէր համարձակվում մոտենալ նրանց (Գործք
Ե 13): Այն ժամանակ հնարավորություն չկար
հարցնելու, թե ուր է Եկեղեցին: Դա հստակ և որո-
շակի ծավալ էր՝ խիստ անջատված ոչ-եկեղեցա-
կան ամենից: Ներկայիս Եկեղեցու և «աշխարհի»
միջև կա մի ինչ-որ միջանկյալ միջավայր: Այժմ
չկա հստակ բաժանում Եկեղեցու և ոչ-Եկեղեցու
միջև: Կա նաև ինչ-որ անորոշ քրիստոնեություն և
անգամ ոչ թե քրիստոնեություն, այլ ընդհանուր

⁸³ Նույն տեղում, ԴՄ. XXIV, 1-2.

վերացական կրոն: Եկեղեցու լույսը խամրեցրել են քրիստոնեություն և կրոնի ահա այդ անորոշ հասկացությունները, և այն տեսնում են բոլոր որոնողները, որի համար «փնտրտուքը» այժմ այդքան հաճախ վերափոխվում է «խարխափումի»: Այստեղից էլ մեր օրերում այդքան առատ են նրանք, «որ միշտ ուսանում են, բայց երբեք չեն կարող հասնել ճշմարիտ գիտությանը» (Բ Տիմ. Գ 7): Եթե թույլատրելի է այսպես արտահայտվել, «աստվածորոնման» ինչ-որ մարգաձև է սկսվել, «աստվածորոնումը» նպատակ է դարձել: Չէ որ մեր շատ «աստվածորոնողների» մասին կարելի է մտածել, որ այն դեպքում, եթե նրանց որոնումները հաջողությամբ պսակվեին, իրենց ծայրաստիճան դժբախտ կզգային և անմիջապես կսկսեին նույն ջանադրությամբ աստվածամարտության մեջ զբաղվել: Չէ՞ որ մեր ժամանակներում շատերը աստվածորոնման հաշվին ուղղակի «անուն» են ձեռք բերել: Մտաբերում եմ գերաշնորհ Միխայիլ Եպիսկոպոսի (Գրիբանովսկի) խիստ վճիռը ընդհանրապես որևէ որոնման վերաբերյալ: «Դրա համար էլ փնտրում են, որ մնացել են առանց սկզբունքների, իսկ մինչ լավագույնները փնտրում են, վատագույններն օգտվում են իրարանցումից և առանց խղճի որևէ խաչթի խարդախություն են անում: Սակայն ինչ խիղճ, երբ ոչ ոք

չգիտի, թե ի՞նչ է ճշմարտությունը, ի՞նչ է բարին, ի՞նչ է չարը»⁸⁴։

Կրոնի և քրիստոնեության միջանկյալ հասկացությունները շատերին միայն հեռացնում են ճշմարտութունից, քանզի Աստծուն անկեղծորեն փնտրողի համար դրանք մի տեսակ դեգերումներ են։ Շատերն են ելնում փնտրառարկների-դեգերումների ճանապարհ, սակայն ոչ բոլորն են հաջողությամբ անցնում այն։ Նրանց զգալի մասն այդպես և «գնում է տառապանքների բովով»՝ չգտնելով իր երանելի հանգիստը։ Ի վերջո, այսպես ասած, կիսալույսի, կիսաճշմարտության այդ ոլորտում, կիսատ ասվածի և անորոշության այդ ոլորտում, «անհստակի և անորոշի այդ աշխարհում» հոգին իսկ արժեզրկվում է, դառնում է անզոր և թույլ է ընկալում շնորհատու ներշնչանքը։ Այդպիսի հոգին փորձելու է «փնտրել» անգամ և այն ժամանակ, երբ գտնի։ Ստեղծվում է «կրոնական դատարկաշրջիկների» տխուր տեսակը, ինչպես դրանց անվանել է Ֆ. Մ. Դոստոևսկին։

Նշված իրավիճակը մեր ժամանակներում բոլոր եկեղեցու անդամ դարձած մարդկանց վրա առանձնահատուկ պատասխանատվություն է դնում։ Եկեղեցու անդամ դարձած մարդիկ շատ

⁸⁴ Письма Преосвященного Михаила, почившего епископа Таврического, Симферополь, 1910, с. 178.

մեղավոր են նրանում, որ բոլոր «փնտրողներին» նրանք հստակ ցույց չեն տալիս և իրենց օրինակով վատ են լուսավորում փնտրատուների վերջնակետը: Իսկ այդ կետը քրիստոնեության վերացական հասկացություն չէ, այլ հենց կենդանի Աստծու Եկեղեցին է: Կարելի է փնտրատուների տանջալի ճանապարհը մինչև վերջ անցած շատ մարդկանց օրինակով դատել, որ լիակատար հանդարտությունը հաստատվում է այն ժամանակ, երբ մարդ հավատում է Եկեղեցուն, երբ իր ողջ էությունը այնպես է ընկալում Եկեղեցու գաղափարը, որ նրա համար աներևակայելի է դառնում քրիստոնեության անջատումն Եկեղեցուց: Այն ժամանակ սկսվում է եկեղեցական կյանքի իրական զգացողությունը: Մարդ զգում է, որ ինքը Եկեղեցու մեծ, մշտադալար և մշտապես երիտասարդ ծառի ճյուղն է: Նա իրեն ոչ թե ինչ-որ դպրոցի հետևորդ է նկատում, այլ հենց Քրիստոսի մարմնի անդամ, որի հետ ընդհանուր կյանք ունի և որից ստանում է այդ կյանքը: Դրա համար, ով հավատացել է Եկեղեցուն, ով կյանքի երևույթների գնահատման և անձնական կյանքի ուղղորդման մեջ առաջնորդվում է Եկեղեցու խոսքով, ով, ի վերջո, զգացել է իր մեջ եկեղեցական կյանքը, նա՛, միայն նա՛ է ճշմարիտ ուղու վրա: Շատ բաներ, որ առաջ անորոշ և գայթակ-

ղելի էին թվում, աներկմտելի և պարզ կղառնան: Հատկապես թանկ է, երբ ընդհանուր ալեկոծության, մի կողմից մյուս, աջ ու ձախ տարուբերումի ժամանակ ամեն եկեղեցու անդամ մարդ զգում է, թե ինչպես է կանգնած անսասան դարավոր ժայռի վրա, որքան ամուր է նրա ոտքերի տակ:

Եկեղեցում Աստծու Հոգին է բնակվում: Սա չոր և դատարկ դավանական հաստատում չէ, որ պահպանվում է սոսկ անցյալի հանդեպ հարգանքից ելնելով: Ո՛չ, դա հենց ճշմարտությունն է, որ փորձառությամբ ճանաչում է յուրաքանչյուր ոք, ով ներթափանցվել է եկեղեցական գիտակցությամբ և եկեղեցական կյանքով: Եկեղեցու շնորհատու կյանքը անգամ չի կարող չոր գիտական ուսումնասիրությունն առարկա լինել, այն մատչելի է միայն փորձարարական ուսումնասիրության համար: Հստակ զգալի շնորհի կյանքի մասին մարդկային լեզուն մշտապես կարող է արտահայտվել միայն աղոտ և անորոշ: Եկեղեցական կյանքի մասին գիտի միայն նա, ով այն ունի. նրա համար այն ապացույցներ չի պահանջում, իսկ չունեցողի համար այն գրեթե անապացուցելի է:

Այդ պատճառով Եկեղեցու անդամի համար ողջ կյանքի խնդիր պետք է լինի մշտապես ավելի և ավելի միաբանվել Եկեղեցու կյանքի հետ, և միևնույն ժամանակ մյուսներին անդադար քա-

րողել հենց Եկեղեցու մասին՝ չփոխարինելով այն քրիստոնեությունամբ, չփոխարինելով կյանքը չոր և հեռացած ուսմունքով: Այստեղ չպետք է որևէ զիջում անել: Չկա քրիստոնեություն, չկա Քրիստոս, չկա շնորհ, չկա ճշմարտություն, չկա կյանք, չկա փրկություն՝ ոչինչ չկա առանց Եկեղեցու, և այդ ամենը կա միայն Եկեղեցում:

Ներկայումս շատ հաճախ է խոսվում Եկեղեցում կյանքի պակասության, Եկեղեցու «վերակենդանացման» մասին: Բոլոր այդ ճառերը մենք դժվարանում ենք հասկանալ և բավականաչափ հակված ենք դրանք բացարձակ անիմաստ համարելու: Եկեղեցում կյանքն երբեք չի կարող սպառվել, քանզի մինչև դարերի վախճանը նրանում բնակվում է Սուրբ Հոգին (Հովհ. ԺԴ 16): Եվ կա՝ Եկեղեցում կյանք: Միայն անեկեղեցական մարդիկ չեն նկատում այդ կյանքը: Աստծու Հոգու կյանքն անհասկանալի է զգացական մարդուն, այն նրան անգամ խենթություն է թվում, քանզի մատչելի է միայն հոգևոր մարդուն: Մեզ՝ հոգեկան խառնվածքի տեր մարդկանց հազվադեպ է տրվում եկեղեցական կյանքի զգացողությունը: Մինչդեռ այժմ էլ սրտով պարզ և կյանքով բարեպաշտ մարդիկ մշտապես ապրում են երանավետ եկեղեցական կյանքի այս զգացողությամբ: Այդ եկեղեցական մթնոլորտը, եկեղեցական այդ

շունչը հատկապես զգալի է վանքերում: Ահա թե որտեղ ես համոզվում եկեղեցում բնակվող Աստծու երանության գործության և գործունեության մեջ: Զարմանում և գոհաբանում ես Աստծուն, երբ տեսնում ես, որ եկեղեցական կյանքն իսկապես վերածնում է մարդուն, դարձնում «նոր արարած»: Այստեղ լուսավորվում է միտքը, ձևավորվում են բարձր, անաղարտ հայացքներ, սիրտը փափկացվում է սիրով և բերկրանք է իջնում հոգու վրա: Եկեղեցուց հեռացածները, իրենց կրթությամբ հպարտացողները իրականում անհամեմատ ցածր և կոպիտ են եկեղեցական կյանքով ապրող պարզ վանականից:

Ո՛չ, մեր կարծիքով՝ ոչ թե պետք է խոսել եկեղեցում կյանքի անբավարարության, այլ՝ մեզանում եկեղեցական գիտակցության պակասության մասին: Շատերն ապրում են եկեղեցական կյանքով՝ բացարձակ հստակ չգիտակցելով դա: Իսկ եթե մենք անգամ գիտակցաբար ենք ապրում եկեղեցական կյանքով, ապա քիչ ենք քարոզում այդ կյանքի բարիքի մասին: Օտարների հետ մենք սովորաբար վիճում ենք միայն քրիստոնեական ճշմարտությունների շուրջ՝ մոռանալով եկեղեցական կյանքի մասին: Վարդապետությունը, տեսությունը, դավանանքը մեր աչքին ավելի բարձր են, քան՝ եկեղեցական կյանքը: Մենք ևս երբեմն

ընդունակ ենք լինում Եկեղեցին փոխարինելու քրիստոնեությունը, կյանքը՝ վերացական ուսմունքով:

Մեր ողբերգությունն է, որ մենք ինքներս քիչ ենք գնահատում մեր Եկեղեցին և եկեղեցական կյանքի մեծ բարիքը: Մենք խիզախորեն, պարզ և հստակ չենք դավանում մեր հավատը Եկեղեցու հանդեպ: Հավատալով Եկեղեցուն՝ մենք մշտապես կարծես ներողություն ենք խնդրում, որ դեռ հավատում ենք նրան: «Հավատի հանգանակի» իններորդ հատվածն ընթերցում ենք առանց հատուկ ուրախության և անգամ մեղավոր տեսք ընդունելով: Ներեկեղեցականացված մարդուն այժմ հաճախ դիմավորում են Տուրգենևի բանաստեղծությունից քաղված հետևյալ բացականչությամբ. «Դուք դեռ հավատո՞ւմ եք: Դուք շատ հետամնաց անձ եք»: Եվ արդյո՞ք շատերն ունեն այդքան քաջություն, որ համարձակ դավանեն. «Այո՛, հավատում եմ մեկ Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցուն, պատկանում եմ ուղղափառ Սուրբ Եկեղեցուն և դրա համար ես ամենաառաջադեմ անձն եմ, քանզի միայն Եկեղեցում է հնարավոր այն նոր կյանքը, որի համար Աստծու Որդին եկավ մեղավոր երկիր, միայն Եկեղեցում կարելի է գալ ի չափ լիարժեք հասակի Քրիստոսի. հետևաբար՝ միայն Եկեղեցում է

հնարավոր իրական առաջընթացը, ճշմարիտ փրկությունը»:

Արդյո՞ք այն հարցին, թե դու Քրիստոսի աշակերտներից չե՞ս, մենք պատրաստ չենք ավելի հաճախ երգվելու, թե չենք ճանաչում այդ Մարդուն: Դրա համար ներկայիս ժամանակի կենսական անհրաժեշտություն կարելի համարել բացահայտ խոստովանությունը այն անվիճելի ճշմարտության, որ Քրիստոս հիմնեց հենց Եկեղեցին, և բացարձակ անհեթեթ է քրիստոնեությունն անշատել ուղղափառ Եկեղեցուց: Այս ճշմարտությունը, կարծում ենք, շատերի համար կլուսավորի իրենց տանջալի փնտրտուքների վերջնակետը, նրանց ցույց կտա այն ոչ թե անկենդան վարդապետության մեջ՝ թեկուզև ավետարանական, այլ եկեղեցական կյանքում, որտեղ նրանք իրապես կազատվեն սատանայի կապանքներից, որոնց մեջ բռնված են նրա կամքը կատարելու պատճառով (Բ ՏԻՄ. Բ 26): Այս ճշմարտությունը կօգնի նաև մեզ ճանաչել եկեղեցական կյանքը և «ժողովել ցրված» զավակներին Եկեղեցու, որպեսզի բոլորը մեկ լինեն, ինչպես աղոթում էր Տեր Հիսուս Քրիստոս Իր շարչարանքներից առաջ:

Տեսե՛ք, թե ինչպես է դժբախտ թռչունը տանջվում, երբ թռչում է ուժեղ քամու ժամանակ: Որքան անհավասար է նրա թռիչքը: Մերթ սլանում է

վեր, ապա քամին նրան ետ է գցում, մերթ փոքրինչ առաջ է անցնում, ապա նորից քամին նրան շատ ետ է մղում: Այդպես և մարդը տարուբերվում է կեղծ ուսմունքների քամիներով: Սակայն, ինչպես թռչունը խաղաղվում է ծառի սաղարթախիտ ճյուղերում գտնվող իր բնում և իր պատսպարանից հանդարտ դիտում է առջևով անցնող փոթորիկը, այնպես և մարդը խաղաղություն է գտնում, երբ դիմում է Եկեղեցուն: Իր խաղաղ հանգրվանից նա նայում է «Եկեղեցու պատերի մոտ մոլեգնող» ամեհի փոթորկին, ողբում այն դժբախտ մարդկանց համար, որոնց վրա այդ փոթորիկը հասավ Եկեղեցուց դուրս և դանդաղում են պատսպարվել նրա բարեբեր հարկի ներքո, և աղոթում է Տիրոջը. «Միավորի՛ր նրանց Քո Սուրբ Հնդհանրական և Առաքելական Եկեղեցով, որպեսզի նրանք մեզ հետ փառավորեն ի Երրորդություն փառաբանվող Աստծու ամենասուրբ և հրաշալի անունը»:



Նշումների համար

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - ԺԴ

ԻԼԱՐԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (Տրոիցկի)

ԶԿԱ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ

Ռուսերենից թարգմանեց

Տ. Վահրամ ավագ քահանա Մելիքյանը

Հրատարակչության
տնօրեն՝

Հրատարակչության
գլխավոր խմբագիր՝

Հրատարակչական
խորհրդի անդամներ՝

Տ. Արարատ քահանա
Պողոսյան

Սարգիս Մելքոնյան

Տ. Մկրտիչ եպս. Պողոսյան,
Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան,
Տ. Ասողիկ արդ. Կարապետյան,
Տ. Արարատ քին. Պողոսյան,
Տ. Գաբրիել քին. Վարդանյան,
Գևորգ Տեր-Վարդանյան,
Կարեն Մաթևոսյան

Էջադրումը՝ Տ. Ղևոնդ ավ. քին. Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ա. ԷԶՄԻԱԾԻՆ - 2021

ISBN 978-9939-59-265-7



9 789939 592657

